



Empowered lives.
Resilient nations.

ՄԱԿ-ի Չարգացման Ծրագիր Երկիրը. Հայաստանի Հանրապետություն ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ¹

Ծրագրի անվանումը. Քաղաքային կանաչ լուսավորություն

ՄԱԿ ԶԱԾ-ի Արդյունք(ներ)ը. Շրջակա միջավայրի և աղետների ռիսկերի նվազեցումը ինտեգրված է հանրապետական և տեղական զարգացման ծրագրերում

ՄԱԶԾ Ռազմավարական պլանի բնապահպանական և կայուն զարգացման գլխավոր արդյունքը. բնապահպանությունը և էներգետիկան ընդգրկվում են ընդհանուր զարգացման ծրագրում

ՀՕ սպասվելիք արդյունք(ներ)ը. 4.1 Հայաստանն ավելի է ընդունակ դիմակայել հիմնական բնապահպանական, այդ թվում՝ կլիմայի փոփոխության և բնական պաշարների կայուն կառավարման մարտահրավերներին

ՀՕՊԳ սպասվելիք արդյունք(ներ)ը . 4.1.5 Շրջակա միջավայրի համար անվնաս, էներգաարդյունավետ տեխնոլոգիաների և ավելի մաքուր արտադրության համար մշակված և իրականացված նորարարական քաղաքականություններ և գործառնություններ

Իրագործող մարմինը/Իրականացնող գործընկերը. ՀՀ բնապահպանության նախարարություն

Իրականացնող մարմինը/Պատասխանատու գործընկերը. ՀՀ բնապահպանության նախարարություն

¹ ԳԷՖ-ը հատուկ պահանջներ է սահմանում ՄԱԶԾ աջակցությամբ և ԳԷՖ ֆինանսավորմամբ նմանօրինակ ծրագրերի համար:

Համառոտ նկարագիր

Մույն ծրագրի գլխավոր նպատակն է քաղաքային ներդրումային ծրագրերի և ազգային քաղաքականությունների իրականացման ճանապարհով Հայաստանի քաղաքներում քաղաքային լուսավորության էներգաարդյունավետության բարձրացման միջոցով խնայել էներգիան և կրճատել ջերմոցային զազերի արտանետումը: Առաջարկվող ծրագիրը համապատասխանում է ազգային գերակայություններին, ռեսուրսներ խնայող և կլիմային հարմարվող տնտեսական աճի խրախուսման միջոցով հզորացնել Հայաստանի Հանրապետության տնտեսական և էներգետիկական անկախությունը:

Այս նպատակին հասնելու համար առաջարկվող ծրագիրը մի շարք միջոցառումներ է իրականացնելու, որոնք կոնկրետ արդյունքներ են ապահովելու: Աշխատանքը կազմակերպվելու է չորս փոխկապակցված բաղադրիչներով. i) քաղաքային էներգափորձաքննություն և տեխնիկական կարողությունների հզորացում; ii) ցուցադրական ծրագրեր; iii) կրկնօրինակում՝ քաղաքային լուսավորության և դրան առնչվող ֆինանսական գործիքների միջոցով; iv) լուսավորության ազգային քաղաքականություններ, նորմեր և ստանդարտներ: Այս բաղադրիչները, միասին, ձգտելու են ապահովել քաղաքականության առանցքային գործիքները՝ և երկրի, և նրա քաղաքների մակարդակներով, ինչին օժանդակելու են տեխնիկական, քաղաքականությանն առնչվող, կրթական և ֆինանսական միջոցառումները, որոնց շնորհիվ կհզորացվեն կարողությունները և կնվազի ներդրումային ռիսկը, և կապահովվի պատշաճ իրականացումը:

Կարգավորող և ինտիտուցիոնալ ծրագրերի ներդրման, տեխնոլոգիաների փոխանցման խրախուսման, վերականգնվող էներգետիկայի ոլորտի ընդլայնման և Կիրտոյի արձանագրության շրջանակներում Մաքուր զարգացման մեխանիզմների (ՄԶՄ) կիրառման շնորհիվ այս միջոցառումներն իրենց նպաստը կբերեն կայուն էներգետիկ ծառայությունների հասանելիության և ՄԱԶԾ-ի նպատակների իրականացմանը:

Բովանդակություն

Հապավումներ..... 4

I. Իրավիճակի վերլուծություն 5

II. Ռազմավարություն..... 13

III. Ծրագրի արդյունքների շրջանակը 26

IV. ընդհանուր բյուջեն եվ աշխատանքային պլանը 29

V. Կառավարման կառուցվածքը 36

VI. Մոնիտորինգի ժամանակացույցը և գնահատումը..... 42

VII. Իրավական հարցեր..... 48

VIII. Աուդիտի պայմանները 49

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԱՂ	Առաջադրանքի դեկավար
ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԲՃՆԼ	աղեղային (բարձր ճնշման) նատրիումային խողովակաձև լամպ (дугловая натриевая трубчатая лампа, ДНАТ)
ԲՊՆ	ՀՀ բնապահպանության նախարարություն
ԳԱՀ	Գործառնական ազգային համակարգող
ԳԷՖ	Գլոբալ էկոլոգիական ֆոնդ
ԳՏԽԽ	գիտական և տեխնիկական խորհրդատվական խումբ
ԵՄ	Եվրոպական միություն
ԵՔԼԸ	«Երքադրոյս» ՓԲԸ
ԷԱ	Էներգաարդյունավետ
ԷԲՊՆ	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն
ԷԾՍԸ	Էներգետիկ ծառայություններ մատուցող ընկերություն
ԾԻՀ	Ծրագրի իրականացման հաշվետվություն
ԾՏՀ	Ծրագրի տարեկան հաշվետվություն
ԿԼԼ	Կոմպակտ լյումինիսցենտ լամպ
ՀԲ	Համաշխարհային Բանկ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՎԷԷՀ	Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
ՄԱ	Մեկնարկային աշխատաժողով
ՄԱԶԾ	ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր
ՄԱԿ ԿՓՇԿ	ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիա
ՄԽ	Միջազգային խորհրդատու
ՄԶՄ	Մաքուր զարգացման մեխանիզմ
ՄՎտԺ	Մեզավատ Ժամ
ՄՖԿ	Միջազգային ֆինանսական կորպորացիա
ՆՀ	Նույնականացման համար
ՇԼ	Շիկացման լամպ
ՋԳ	Ջերմոցային գազեր
ՄԽԼԼ	Մոդիկային խողովակաձև լյումինեսցենտ լամպ
ՄԼԼ	Մոդիկային լյումինեսցենտ լամպ
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ՏԽ	Տեղական խորհրդատու
ՔՇՆ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն
GGF	«Կանաչ աճ» հիմնադրամ, Green for Growth Fund

I. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում քաղաքների ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումների երկրորդ խոշորագույն աղբյուրը լուսավորություն է (ջեռուցումից հետո) և կազմում է քաղաքների ջերմոցային գազերի ընդհանուր արտանետումների մոտ մեկ երրորդը և քաղաքների էլեկտրաէներգիայի ծախսերի մինչև 50 տոկոսը: Քաղաքների լուսավորման համար Հայաստանի քաղաքապետարանները ծախսում են տարեկան ավելի քան 5 մլն ԱՄՆ դոլար (էներգիայի ծախսեր և սպասարկում): Քաղաքային լուսավորության առումով մայրաքաղաք Երևանը ամենախոշոր սպառողն է և ծախսում է երկրում քաղաքային լուսավորության համար սպառվող ամբողջ էներգիայի 90%-ը, կամ տարեկան մոտ 56,000 ՄՎտժ: Մինևույն ժամանակ Երևանում և Հայաստանի մյուս քաղաքներում կա զգալի տեխնիկական ներուժ՝ շահութաբեր եղանակով հանրային լուսավորության արդյունավետությունը բարելավելու համար: Երևանի փողոցները լուսավորելու համար միջին տեսակարար էներգասպառումը 1,3-ից 1,5 անգամ ավելին է, քան Եվրոպայի մեծ և փոքր քաղաքներում փողոցային լուսավորության համար:

Հետևյալ աղյուսակում ամփոփված են Երևանի և 17 խոշոր և միջին չափի՝ երկրի քաղաքային համայնքների լուսավորության հիմնական տվյալներ:²

Աղյուսակ 1. Հանրային լուսավորությունը Հայաստանում

Անվանումներ	Երևան	Այլ քաղաքներ
Լուսավորվող օբյեկտների քանակը, այդ թվում՝	1.235	981
Փողոցներ	649	575
Բակեր	363	143
Զբոսայգիներ	31	29
Ստորգետյա և վերգետնյա անցումներ	32	0
Կամուրջներ և կամարանցումներ	72	13
Գովազդային լուսավորություն	0	116
Ճարտարապետական և գեղարվեստական արժեք ներկայացնող շենքեր և շինություններ	2	8
Հուշարձաններ	68	35
Մշակութի տներ և թանգարաններ	5	9
Եկեղեցիներ	5	10
Համայնքային վարչական շենքեր	4	36
Բարձրագույն ուսումնական հաստատություններ	4	7
Փողոցային լուսատուների քանակը և տեսակը		
Բարձր ճնշման նատրիումային 150 Վտ/250 Վտ (մեծամասնությունը ԲՃՆԼ 250 տիպի)	50.785	7.450
Մնդիկային (250 Վտ)	2.000	3.734
Մնդիկային (400 Վտ)	700	2.740
ԿԼԼ (մեծամասնությունը մինչև 100 Վտ, հավասարազոր է մոտ 250 Վտ-ի)	1.166	2.200
ԼԴԼ-եր (120 Վտ)	0	110

² Հայաստանում կան ընդամենը 48 քաղաքային համայնքներ. 17 քաղաքներից ստացած քաղաքային լուսավորության ներկայացված տվյալները կազմում են Հայաստանի ամբողջ քաղաքային լուսավորության 80 տոկոսը:

Անվանումներ	Երևան	Այլ քաղաքներ
Հալոգենային (հիմնականում դեկորատիվ լուսավորության համար)	229	0
Ընդամենը	54.880	16.234
Այլ օգտակար տվյալներ		
Փողոցային լուսավորության համակարգի ընդհանուր դրվածքային հզորությունը, ՄՎտ	15	4
Էլեկտրաէներգիայի տարեկան սպառումը 2011թ., մլն կՎտժ տարեկան	31.3	8.736
Էլեկտրաէներգիայի տարեկան ծախսը 2011թ., մլն ԱՄՆ դոլար տարեկան	1.994	0,603
Միջին սակագինը, ԱՄՆ դոլար/կՎտ	0.063	0.069
Փողոցների լուսավորման միջին օրական տևողությունը, ժամ	8	644
Փողոցային լուսավորության համակարգից ՋԳ արտանետումները, tCO ₂ տարեկան	12.520	3.495
Չլուսավորվող օբյեկտների քանակը և տեղադրման ենթակա փողոցային լուսատուների քանակը		
Փողոցներ և նրբանցքներ	507	400
Բարձր ճնշման նատրիումային լամպեր, 250 Վտ	6.071	5.000
Բարձր ճնշման նատրիումային լամպեր, 150 Վտ	3.685	3.000

Ինչպես ցույց է տրված վերևում, Երևանի փողոցների լուսավորման համար օգտագործվող լուսատուների ճնշող մեծամասնությունը (ընդհանուր փողոցային լապտերների մոտ 93%-ը) 250 Վտ հզորությամբ բարձր ճնշման նատրիումային լամպեր են (ԲՃՆԼ), իսկ մյուս քաղաքներում փողոցների լուսավորության համար օգտագործվում են լուսատուների երեք հիմնական տեսակներ՝ ԲՃՆԼ (46%), սնդիկային լամպեր (40%) և ԿԼԼ-եր (13%):

Ըստ քաղաքային համայնքներից ստացված տեղեկատվության՝ փողոցային լուսատուների (լուսատու սարքեր³ և լամպեր) մեծամասամբ արտադրված են Չինաստանում և ցածրորակ են: Լուսատուների հետ կապված հիմնախնդիրն այն է, որ դրանց իրական տեխնիկական պարամետրերը (հզորություն, լուսատվություն, շահագործման ժամկետ, և այլն) չեն համապատասխանում լուսատեխնիկական սարքերի վրա մակնշված ցուցանիշներին: Արդյունքում քաղաքապետարանների շահագործման և պահպանման ծախսերն աճում են՝ դրանց փոխարինման մեծ ծախսերի, ինչպես նաև փողոցային լուսավորություն պահանջվող մակարդակը ապահովելու նպատակով բարձր հզորության լամպեր տեղադրելու անհրաժեշտության պատճառով: Սա, իր հերթին, հանգեցնում է էներգիայի չարդարացված բարձր սպառմանը և փողոցային լուսավորության ոլորտից այդ սպառմանը հավասարազոր ՋԳ-ի արտանետումներին: Մյուս կողմից, վերը նշված «անարդյունավետ» փողոցային լուսավորության տեխնոլոգիաների կողմից էներգիայի մեծ սպառումը հանգեցնում է էներգիայի դիմաց մեծ ծախսերի, ինչը (ՇևՊ մեծ ծախսերով հանդերձ) համայնքների համար սովորաբար բավականին ծանր բեռ է: Այս հանգամանքը քաղաքապետարաններից շատերին ստիպում է կրճատել փողոցների լուսավորման տևողությունը, կամ նույնիսկ դադարեցնել որոշ երկրորդական փողոցների և օբյեկտների լուսավորությունը՝ փողոցային լուսավորության ծախսերը կրճատելու և այդ ծախսերը համայնքային բյուջեների սահմաններում պահելու նպատակով:

³ Որոշ քաղաքներում դեռ օգտագործվում են հին, խորհրդային արտադրության այլումինե լուսավորության սարքեր, սակայն դրանք աստիճանաբար փոխարինվում են պլաստիկ նոր նյութերից պատրաստված նոր սարքերով:

Ելակետային ֆինանսավորում

Երևանում և Հայաստանի ողջ տարածքում քաղաքապետարաններն առկա լուսավորության համակարգերի պահպանման և պարբերաբար արդիականացման, ինչպես նաև որոշ վայրերում նոր լուսատեխնիկական սարքերի տեղադրման կանոնավոր միջոցառումներ են իրականացնում: Այս միջոցառումները ներառում են հետևյալ գործոնները, որոնք հատկապես համապատասխանում են ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագրին.

- Երևանի քաղաքապետարանը շարունակում է քաղաքային լուսավորության ծառայությունների նպատակով սպառած էներգիայի համար զգալի գումարներ վճարել (տարեկան մոտ 4,5 մլն ԱՄՆ դոլար): Այն նաև հոգում է քաղաքի լուսավորության ենթակառուցվածքների կանոնավոր վերանորոգման և սպասարկման ծախսերը (տարեկան մոտ 2,7 մլն ԱՄՆ դոլար): «Երբաղլույս» ՓԲԸ (ԵՔԼԸ), որը քաղաքապետարանի կողմից լիազորված ընկերություն է և զբաղվում է Երևանի հասարակական վայրերի լուսավորությամբ, մշակել և կազմել է 2013-2016թթ. համար զարգացման ծրագիր, որի ընդհանուր արժեքը 7,2 մլն ԱՄՆ դոլար է: Այդ ծրագրի առավել կարևոր բաժինը վերաբերում է դեռևս չլուսավորվող փողոցներում և ճանապարհներում լուսավորման համակարգերի տեղադրմանը: Ծրագրում ներգրավված են 507 փողոցներ ու ճանապարհներ և գրեթե 300 կմ երկարությամբ նոր էլեկտրական գծերի անցկացում: ԵՔԼԸ-ը նաև սկսել է փողոցային լուսավորության 150 Վտ և 250 Վտ ԲՃՆ տարբեր արտադրության լամպերի և լուսատեխնիկական սարքերի հիմնական ցուցանիշների նախնական համեմատությունները: Փորձարկման նպատակն է չափել փողոցային լուսավորման սարքավորումների զանազան ցուցանիշները, հատկապես փողոցի լուսավորված հատվածի լուսավորվածությունը (անզլերեն տարբերակի Հավելված Ե),
- ՄԱԶԾ և Քաղաքապետարանի «Գեղեցիկ Երևան» նախաձեռնությունն իրականացնում է ենթակառուցվածքների բարելավման ծրագրեր, այդ թվում՝ ընտրված հասարակական վայրերի լուսավորությունը, որի նպատակն է «կանաչ» աշխատատեղեր ստեղծել և խրախուսել արդյունավետ լուսավորության տեխնոլոգիաները: Ծրագրի տևողությունը 3 տարի է, արժեքը՝ 1,0 միլիոն ԱՄՆ դոլար,
- Քաղաքաշինական նոր նախագծով նախատեսվում են նաև նոր փողոցների, գետնանցումների և ավտոկայանատեղերի կառուցումը: Այս ծրագրերում 2013-2014թթ. համար լուսավորության բաղադրիչի արժեքը, որի համար ներկայումս ԲՃՆ էժան լամպերի մրցույթ է հայտարարված, կազմում է շուրջ 0,32 մլն ԱՄՆ դոլար,
- Մևան քաղաքի զարգացման քառամյա նախագիծը ներառում է նորակառույց զբոսայգու արտաքին լուսավորության համակարգի կառուցում, ինչպես նաև հարակից փողոցի մոտ 900 մետր երկարությամբ արտաքին լուսավորության համակարգի վերականգնման և արդիականացման աշխատանքներ: Այդ միջոցառումների համար ընդհանուր բյուջեն կազմում է մոտ 500.000 ԱՄՆ դոլար, դրան գումարած այն 25.000 ԱՄՆ դոլարը, որը քաղաքային բյուջեից հատկացվելու է միայն 2013թ. այլ վայրերի լուսավորության համար,
- Սպիտակ քաղաքը 2013-2016թթ. իր զարգացման ծրագրի մեջ ներառել է քաղաքային լուսավորության ներկա համակարգի արդիականացումը և ընդլայնումը: Այս աշխատանքների նախնական բյուջեն կազմում է մոտ 30.000 ԱՄՆ դոլար, որը քաղաքը ձգտում է հայթայթել միջազգային ֆինանսական ինստիտուտներից: Բացի դա, քաղաքն իր բյուջետային միջոցներից հատկացրել է մոտ 22.500 ԱՄՆ դոլար՝ փողոցների լուսավորության համար, որը ներառում է տեխնիկական վերազինումը, ինչպես նաև ընթացիկ շահագործման և պահպանման ծախսերը:

Բացի արդեն հաստատված ելակետային միջոցառումներից, կան նաև մի շարք այլ նորահայտ ֆինանսավորման և ծրագրային միջոցառումներ, որոնց առաջարկվող ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագիրը զորակցելու է, աջակցելով Հայաստանում քաղաքային ԷՍ լուսավորության բարելավմանը:

Երևանի քաղաքապետարանը քննարկում է փողոցային լուսավորության գործող համակարգերի, շահագործման և պահպանման, նոր լուսավորության կապիտալ ներդրումների համար կոնցեսիոն պայմանագրի հնարավորությունը:

Բացի դա, քաղաքը մշակել է ծրագիր, որի նպատակն է գործընկերներ փնտրել կամ մասնավոր կապալառուների հետ կոնցեսիոն պայմանագիր կնքել քաղաքի բարեկարգման խոշոր ծրագրերի համար (մոտ 70 մլն ԱՄՆ դոլար), օրինակ՝ Հաղթանակի զբոսայգու պես տեսարժան վայրեր: Այդ ծրագրերով նախատեսված է ներդրումներ կատարել նաև նոր լուսավորության համար, այդ թվում՝ ներդրումներ ավտոկանգառներում և այլ հասարակական տարածքներում ԼԴԼ լուսատուներ տեղադրելու համար: Այդ ծրագրերի իրականացումը կախված է մասնավոր հատվածի կամ միջազգային կառույցների կողմից ֆինանսավորման առկայությունից:

Քաղաքապետարանը քննարկում է Ավստրիական OeKB բանկի հետ (Oesterreichische Kontrollbank Aktiengesellschaft) էներգետիկ փորձաքննության անցկացման և Երևանի փողոցների ԷԱ լուսավորության գործողությունների պլանի մշակման համար 100.000 ԱՄՆ դոլար դրամաշնորհ տրամադրելու հարցը:

«Քաունթերփարթ Ինթերնեշնլ - Հայաստան» կազմակերպությունը տեղական ինքնակառավարման մարմինների աջակցության իր միջոցառումների շրջանակներում փողոցային լուսավորության նոր համակարգերի համաֆինանսավորման նպատակով տեղական ինքնակառավարման մարմիններին խրախուսական դրամաշնորհներ է տրամադրում: Քաունթերփարթ Ինթերնեշնլ - Հայաստանը 2012թ. տրամադրել է 95,000 ԱՄՆ դոլար չորս քաղաքային և տասը գյուղական համայնքներում փողոցային լուսավորման նոր համակարգերի տեղադրման համար: Այս աշխատանքը շարունակելու է նաև 2013թ.:

Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկը (ՎԶԵԲ) իր գործընկեր բանկերի միջոցով Հայաստանում էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի համար տրամադրում է վարկային գծեր: Բանկի՝ Հայաստանի Հանրապետության համար մշակված Ռազմավարության մեջ, որը հաստատվել է 2012թ. մայիսին, ՎԶԵԲ-ը կայուն էներգետիկան, ներառյալ՝ էներգաարդյունավետությունը, ընդունել է որպես իր հաջորդ փուլի չորս ռազմավարական գերակայություններց մեկը և հաստատում է, որ շարունակելու է վարկեր տրամադրել ԷԱ ծրագրերի համար: ՎԶԵԲ-ը ստորև ներկայացված ոլորտին բնորոշ խոչընդոտների պատճառով ներկայումս Հայաստանի էներգաարդյունավետ քաղաքային լուսավորության ծրագրերով չի զբաղվում, սակայն պատրաստ է ուսումնասիրել ՄԱԶՕ-ԳԷՖ հետ համագործակցելու հնարավորությունը, քանի որ նման գործունեությունը կարող էր համահունչ լինել բանկի կողմից օժանդակվող քաղաքային ենթակառուցվածքների և կոմունալ ծառայությունների այլ ոլորտների հետ:

Միջազգային ֆինանսական կորպորացիան (ՄՖԿ) Հայաստանում անմիջական ֆինանսավորում է տրամադրում ԷՕՄԸ-ներին, կամ այլ մասնավոր ընկերություններին ԷԱ այն նախագծերի համար, որոնք համապատասխանում են նվազագույն չափի, տեխնիկատնտեսական նպատակահարմարության և ակնկալվող խնայողությունների չափանիշներին: Լուսավորության որակյալ կազմակերպության չափանիշներին համապատասխանող ծրագրերը կարող են դիմել աջակցություն հայտով, սակայն քաղաքային կառույցների հետ պետք է ձեռք բերվեն հստակ երկարաժամկետ պայմանավորվածություններ՝ մասնավոր հատվածի մասնակցությունն ապահովելու համար: Երևանի պես դեպքերում քաղաքային լուսավորության համակարգը կառավարող մասնավոր ընկերությունները կարող են քաղաքապետարանի հետ էներգետիկ ծառայությունների համաձայնագիր կնքել, որով վերջինս կպարտավորվի վճարել էներգիայի բազային ծախսերը պայմանագրի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում, և դրա արդյունքում մասնավոր ընկերությունը հնարավորություն կունենա վարկի համար դիմել ՄՖԿ-ին:

«Կանաչ աճ» հիմնադրամը (Green for Growth Fund, GGF) Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) և գերմանական KfW բանկի միջև մի գործընկերություն է, որը աջակցում է իր տեղական գործընկեր բանկերի կողմից ԷԱ և վերականգնվող էներգիայի նախագծերի համար նպատակային վարկային միջոցների ձևավորմանը: GGF-ի գործընկեր բանկերից մեկը, Արարատ Բանկը հայտնել է իր պատրաստակամությունն ու հետաքրքրությունն համագործակցելու ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագրի հետ, գտնելով և ֆինանսավորելով բանկի համար հետաքրքիր՝ Հայաստանում ԷԱ լուսավորության ծրագրեր (տես մտադրությունների մասին նամակը. անգլերեն տարբերակի Հավելված D):

Ելակետային քաղաքականություն

Ծրագրի նախապատրաստական շրջանում նաև պարզվել էր, որ ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագրի համար մեծ հնարավորություններ կան, որոնք կարող են նպաստել ԵԱ լուսավորությանն առնչվող ազգային քաղաքականության արդիականացմանը և զարգացմանը:

Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի Ազգային ծրագիրը (2007թ.) և Գործողությունների պլանը (2010թ.) ընդգծում են Հայաստանի համար ԷԱ կարևորությունը: Ազգային ծրագրում լուսավորությունը նշվում է որպես էներգախնայողության ութ առաջնային ոլորտներից մեկը և ԷԱ լուսատուների և լուսավորման համակարգերի ներդրման միջոցով 10 տարիների ընթացքում էլեկտրաէներգիայի սպառման կրճատումը (475 մլն կՎտժ) ընդունվում է որպես էներգախնայողության առանցքային թիրախ: Էներգախնայողության գործողությունների Ազգային ծրագիրը նույնպես դիտարկում է փողոցային լուսավորությունը որպես առաջնահերթություն պետական և մասնավոր ծառայությունների ոլորտում:

2012թ. փետրվարի 8-ին ուժի մեջ է մտել Տեխնիկական կանոնակարգերի մասին նոր օրենքը: ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության (ԷԲՊՆ) առաջարկությամբ ԷԱ և վերականգնվող էներգետիկան ներառվել են սույն օրենքում որպես տեխնիկական կանոնակարգման ենթակա բնագավառներ: Ներկայումս ԷԲՊՆ-ը նախատեսում է մշակել ԷԱ տեխնիկական կարգավորման համապարփակ հայեցակարգ, որի հենքի վրա մակնշման, շահագործման, փորձարկման մեթոդների և օգտագործումից հետո հեռացման կոնկրետ պարտադիր տեխնիկական կանոնակարգեր են նախապատրաստվելու: ԷԲՊՆ-ը աջակցության հայցով դիմել է ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագրին, ինդրելով օժանդակել ԷԱ լուսավորության համար անհրաժեշտ տեխնիկական կանոնակարգերի մշակմանը:

ԷԲՊՆ-ի հետ խորհրդակցությունների արդյունքում պարզվել է նաև, որ ՇԼ-երի աստիճանական դուրս մղման հեռանկարը հատկապես համընկնում է ազգային տնտեսության բոլոր հատվածներում, այդ թվում՝ բնակելի և հասարակական շենքերում, էներգիայի արդյունավետության և ԷԽ բարելավման՝ նախարարության ընթացիկ քաղաքականության հետ: Հետևաբար, նախարարությունը ոչ միայն համամիտ է այս պլանավորված նախաձեռնությանը, այլև, փաստորեն, պատրաստակամություն է հայտնել և պարտավորվել է աջակցել դրա հաստատմանը կառավարության կողմից:

Նշենք նաև, որ Հայաստանը պարտավորություն է ստանձնել իր օրենսդրության ներդաշնակեցմանը ԵՄ օրենսդրության հետ, այդ թվում՝ (ԵՄ) թիվ 347/2010 Հանձնաժողովի Կանոնակարգին և (ԵՀ) թիվ 245/2009 Հանձնաժողովի Կանոնակարգին, որոնք վերաբերում են առանց ինտեգրված բալաստային դիմադրության ցերեկային լույսի (լյումինիսցենտ) լամպերի, բարձր ինտենսիվության պարպման լամպերի և նման լամպերն աշխատեցնող բալաստային դիմադրության ու լույսի աղբյուրների համար սահմանված էկոդիզայնի պահանջներին: Մակայն կենցաղային լամպերի վերաբերյալ ԵՄ կանոնակարգերը, այդ թվում ԿԼԼ-երը, դեռ չեն

ընդգրկվել Հայաստանի կողմից մինչև 2020թ. ներդաշնակեցման ենթակա իրավական ակտերի ցանկում:

Ավելին, ԷԲՊՆ-ն արդեն առաջարկել է Կառավարությանը ապրանքների տեխնիկական պարամետրերի՝ հնարավորության դեպքում նաև նվազագույն էներգատարության չափանիշների պահանջները, ներառել պետական գնումների ընթացակարգերի մեջ: Ի պատասխան այս առաջարկին, ՀՀ ֆինանսների նախարարությունն առաջարկել է, որ ԷԲՊՆ-ը մշակի այդ պահանջները: Սակայն ներկայումս այդ աշխատանքն իրականացնելու համար ԷԲՊՆ-ը բավարար տեխնիկական կարողություններ չունի: ԷԲՊՆ-ի խնդրանքով ՄԱԶԾ-ԳԷՖ կողմից առաջարկվող ծրագիրը անհրաժեշտ աջակցություն կտրամադրի ԷԲՊՆ-ին՝ այդ պահանջները մշակելու համար:

Շենքերի լուսավորության նախագծման որոշ բաղադրիչներ կարգավորվում են ՀՀ քաղաքաշինության նախարարության (ՔՇՆ) կողմից հաստատված ՀՀ-ում շենքերի բնական և արհեստական լուսավորության մասին շինարարական նորմերով: Կարիք կա վերլուծելու այդ նորմերը, համեմատելու դրանք գործող միջազգային նորմերի հետ և փոփոխություններ առաջարկելու Հայաստանում գործող կանոնակարգերը միջազգային պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:

Հաշվի առնելով քաղաքականության բորոր այդ գերակա ուղղությունները՝ ներկայումս անհրաժեշտ են հետազոտություններ, տեխնիկական վերլուծություն, քաղաքականության մշակում և, ի վերջո, կիրառման աջակցություն, որոնք ամբողջությամբ կարտացոլեն Հայաստանի պայմանները, կարձագանքեն նրա քաղաքացիների ու հաստատությունների կարիքներին, և հաշվի առնեն այլ երկրներից քաղած դասեր և փորձ, եթե դրանք կիրառելի լինեն Հայաստանի պայմաններում: ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագիրը լավ հիմքեր ունի այդ ոլորտներին անհրաժեշտ աջակցություն մատուցելու համար:

Խոչընդոտները

Տեղեկատվության և իրազեկվածության պակաս

Հանրային լուսավորության համար պատասխանատու քաղաքային ծառայությունների մոտ արդիական ԷԱ լուսավորության տեխնիկական նախագծման, իրականացման և ֆինանսական արդյունքների գնահատման փորձառությունը բավարար չէ: Այս խնդիրը հատկապես նկատելի է մարզային համայնքներում, որտեղ լուսավորության համակարգերը վերահսկող որակյալ կադրերի պակաս կա: Բազմաթիվ դեպքերում քաղաքապետարանների պատասխանատուները սխալ են մեկնաբանում էներգաարդյունավետության սկզբունքները և առկա լամպերը, օրինակ՝ ԲՃՆ լամպերը, փոխարինում են ավելի ցածր հզորության և լուսատվության ցածր արդյունավետության լամպերով: Նման մոտեցումն իսկապես հանգեցնում է էներգիայի սպառման կրճատմանը, սակայն կտրուկ նվազեցնում է փողոցների լուսավորության մակարդակը՝ այն իջեցնելով նույնիսկ պահանջվող մակարդակից ցածր:

Երևանի քաղաքապետարանը նման միտումներից որոշակի բացառություն է կազմում, քանի որ այն քաղաքի լուսավորության ցանցի զարգացման, շահագործման և պահպանման պատասխանատվությունը փոխանցել է ԵՔԼԸ-ն, որն, համալրված է որակյալ անձնակազմով: ԵՔԼԸ-ը մի շարք ԷԱ միջոցառումներ է իրականացնում: Այդուհանդերձ, քանի որ Երևանի քաղաքապետարանի կողմից քաղաքային լուսավորության համար հատկացված բյուջեն սահմանափակ է, ԵՔԼԸ-ը ԷԱ էժանագին միջոցառումներ է իրականացնում, որոնք ունեն կարճ ետզնման ժամկետ (օրինակ. սնդիկային լամպերի փոխարինումը ԲՃՆ լամպերով), և անտեսում է առավել «ռադիկալ» այն մոտեցումները, որոնք համակարգի ընդհանուր արդյունավետության առումով կարող էին շատ ավելի օգտակար լինել, սակայն ավելի մեծ միջոցներ կպահանջեին: Արդյուն-

քում համակարգում էներգախնայողության ամբողջ ներուժը պատշաճ կերպով գնահատված և իրականացված չէ (ստորև տես՝ ֆինանսավորման բացակայությունից ծագող խոչընդոտները):

Տարբեր լրատվամիջոցների կողմից ԷԱ լամպերի գովազդի միջոցով բնակչությունը որոշակի առումով տեղյակ է ԷԱ լուսավորության արտադրանքի (օրինակ՝ ԿԼԼ-երի) հնարավոր օգուտների մասին, սակայն տեղական շուկայում վաճառվող այդ ապրանքները մեծամասամբ ցածր որակի են, հետևաբար, նպաստում է այդ արտադրանքի նկատմամբ անվստահության ձևավորումը: Չկա որևէ արդյունավետ կամ ստանդարտացված մեխանիզմ սպառողներին ցածր որակի, առանց մակնշման լուսավորության արտադրանքից պաշտպանելու համար, որոնք, երբեմն, նույնիսկ արտադրողի մասին հիմնական տեղեկություններ չեն կրում: Բարձր որակի արտադրանքը դեռևս թանկ է բնակչության մեծամասնության համար, և նրանք, հետևաբար, շարունակում են գնել ավանդական ՇԼ-եր, դրանով իսկ խուսափելով բարձր սկզբնական ծախսերից:

Այս խոչընդոտն առաջարկվող ծրագրի Բաղադրիչներ 1-ի (էներգափորձաքննություն և տեխնիկական կարողությունների հզորացում) և 2-ի (ցուցադրական ծրագիր) ուշադրության առարկաներից է լինելու:

Տեխնիկական կարողությունների ցածր մակարդակ

Քաղաքապետարանի ենթակայության հանրային ծառայությունները լուսավորության էներգա-արդյունավետության ծրագրերի նախագծման փորձ չունեն: Նոր կառուցվող շենքերի լուսավորությունը նախագծվում է լիցենզավորված ճարտարապետական կազմակերպությունների կողմից: Որոշ դեպքերում, այդ թվում՝ Երևանում, լուսավորության նոր համակարգի տեղադրումը կատարվում է մասնավոր կապալառու ընկերությունների կողմից: Այդ կապալառուների տեխնիկական կարողությունների մակարդակը տարբերվում է: Տեխնիկական և ֆինանսական սահմանափակ կարողությունների պատճառով Հայաստանում դեռ գոյություն չունեն լուսավորության ոլորտին համապարփակ էներգետիկ ծառայություններ մատուցող ԷՕՄԸ-եր կամ նմանատիպ կազմակերպություններ: Մասնավոր ոլորտը գործում է, բայց ԷԱ լուսավորության սարքավորումներ ներմուծելու, հավաքելու, վաճառելու և տեղադրելու համար դեռ բավակազափ ներգրավված չէ:

Այս խոչընդոտը նույնպես առաջարկվող ծրագրի Բաղադրիչներ 1 և 2-ի ուշադրության առարկաներից է լինելու:

Քաղաքային լուսավորության համար մատչելի ֆինանսական միջոցների բացակայությունը

Քաղաքային իշխանությունները լուսավորության վրա տարեկան միլիոնավոր դոլարներ են ծախսում (միայն Երևանում՝ տարեկան մոտ 4,5 մլն ԱՄՆ դոլար), սակայն նրանց բյուջեները սահմանափակ են և խոշոր, նոր ներդրումների և տեխնիկական վերազինման համար լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսում: Քաղաքային համայնքների բյուջեներում ԷԱ վերազինման համար նպատակային միջոցների բացակայության պայմաններում ներդրումները կախված են արտաքին ֆինանսավորման առկայությունից:

Մինչ օրս, սակայն, Հայաստանում նման ֆինանսավորումը հիմնականում անհասանելի է եղել: Քաղաքապետարանների և լուսավորությամբ զբաղվող կապալառու ընկերությունների միջև լուսավորության համակարգում ԷԱ ներդրումների համար կնքված համաձայնագրերում հեշտ չէ ներառել նախնական ներդրումների, ստացված խնայողությունների և հարակից ֆինանսական ռիսկերի բաշխման պայմանները, հատկապես հաշվի առնելով բարձր նախնական

ծախսերը և երկար ետգնման/մարման ժամկետը: Քաղաքային ենթակառուցվածքների մեջ մասնավոր և քաղաքային համայնքների ներդրումներն էական են, սակայն դրանցում կանաչ լուսավորության միջոցով ծախսեր տնտեսող հնարավորություններին առաջնահերթություն չի տրվում և չի իրականացվում: ԷԱ լուսավորության քաղաքային վերականգնող/շրջանառու հիմնադրամներ գոյություն չունեն:

Մասնավոր ԷԾՄԸ-ների կողմից Ֆինանսավորումը գրեթե բացակայում է, քանի որ ոլորտը դեռ զարգացած չէ և նույնիսկ ԷԾՄԸ-ների առկայության դեպքում լուսավորության ծրագրերը նրանց չեն հետաքրքրում: ԷԾՄԸ-ների զարգացման որոշ նպաստավոր նախադրյալներ կան, այդ թվում՝ էներգիայի գների աճի միտումը, կանաչ լուսավորության ներդրումների համար քաղաքապետարանների բյուջեների սակավությունը և հաճախորդների մոտ ԷԱ լուսավորության օգուտների մասին իրազեկվածության աճը: Սակայն առկա են մի շարք գործոններ, որոնք ԷԾՄԸ-ներին ետ են պահում քաղաքային լուսավորությամբ զբաղվելուց, որոնցից են. կանաչ քաղաքային լուսավորության ծրագրերի կենսունակ առաջարկների մշակման անփորձությունը և տեղական բանկերի մոտ ԷԱ լուսավորման ծրագրերի գնահատման փորձառության պակասը, ինչպես նաև, ցածր պահանջարկի պատճառով, ոչ թանկարժեք, բարձրորակ, արդյունավետ լուսատեխնիկական արտադրանքի բացակայությունը:

Այս խոչընդոտը ծրագրի 3-րդ Բաղադրիչի ուշադրության հիմնական առարկաներից է լինելու:

Քաղաքականության և կարգավորման բացակայությունը, կամ անբավարարությունը

Ներկայումս Հայաստանում կենցաղային լամպերի հզորության վերաբերյալ սահմանափակումներ չկան: Լուսավորման սարքերի նախագծման և տեղադրման կանոնակարգերը ներառված են շինարարական և առողջապահական նորմերում: Բնական և արհեստական լուսավորության վերաբերյալ շինարարական նորմերը կարգավորում են ներքին և արտաքին տարածքների լուսավորվածության մակարդակը և ԷԱ վերաբերյալ պահանջները շատ սահմանափակ են: Ապրանքների/արտադրանքի ստանդարտների վերաբերյալ ազգային օրենսդրություն կա, այդ թվում՝ լուսատեխնիկական սարքերի տեխնիկական ստանդարտներ, սակայն լուսատեխնիկական սարքերի ներկայիս ստանդարտները վերաբերում են առողջությանը և անվտանգությանը, սակայն ոչ՝ էներգաարդյունավետությանը: Ավելին, պետական գնումների մասին օրենքը պահանջում է, որ սարքավորումները գնվեն նախնական գնի հիման վրա, առանց հաշվի առնելու դրանց շահագործման ժամկետի ընթացքում կատարվելիք ծախսերը՝ դա չի նպաստում ԷԱ լուսատուների գնմանը, որոնց շահագործման արժեքն ավելի ցածր է և որոնք սովորական լուսավորող սարքերից ավելի երկարակյաց են: Չկա նաև ԷԱ լուսավորության արտադրանքի խթանման պետական քաղաքականություն:

Այս խոչընդոտը ծրագրի 4-րդ Բաղադրիչի ուշադրության առարկաներից է լինելու:

II. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Առաջարկվող ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագիրը կառուցվելու է Հայաստանի Հանրապետության քաղաքների և երկրի մակարդակով լուսավորության ընթացիկ և նախատեսվող միջոցառումների հենքի վրա և ԳԷՖ-ի ֆինանսական միջոցներով հաղթահարելու է վերոհիշյալ խոչընդոտները և օգուտներ է բերելու գլոբալ շրջակա միջավայրին:

ԳԷՖ-ի կողմից ծրագրի գործունեությանը աջակցելու հիմնական նպատակն է **քաղաքային ներդրումային ծրագրերի և ազգային քաղաքականության իրականացման միջոցով՝ Հայաստանի քաղաքներում լուսավորության համակարգերի էներգաարդյունավետության բարձրացման շնորհիվ՝ խնայել էներգիան և նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները**: Այս աշխատանքը կազմակերպվելու է չորս փոխկապակցված բաղադրիչների միջոցով.

Բաղադրիչ 1. Քաղաքային էներգափորձաքննություն և տեխնիկական կարողությունների հզորացում,

Բաղադրիչ 2. Ցուցադրական ծրագրեր,

Բաղադրիչ 3. Ընդօրինակում՝ Քաղաքային լուսավորության և դրան առնչվող ֆինանսական գործիքների միջոցով,

Բաղադրիչ 4. Լուսավորության ազգային քաղաքականություններ, նորմեր և ստանդարտներ:

Այս բաղադրիչները պարունակում են ծրագրի նույնականացման ձևը լրացնելու փուլում մշակված բոլոր տարրերն ու նախատեսվող արդյունքները, սակայն կանոնավոր իրականացումը պարզեցնելու և հեշտացնելու նպատակով այդ տարրերը ներառվել են ընդհանուր ծրագրում և վերակազմակերպվել: Այժմ ծրագրով նախատեսվում են նաև բնակարանային հատվածի լուսավորությանն առնչվող մի քանի խոշոր միջոցառումներ:

Այս բաղադրիչները, միասին, ձգտում են հիմնել քաղաքականության գործիքակազմի անկյունաքարը՝ քաղաքների և երկրի մակարդակներով, և, որին աջակցելու են տեխնիկական, քաղաքականությանն առնչվող, կրթական, և ֆինանսական միջոցառումները, որոնց շնորհիվ կհզորացվեն կարողությունները և կնվազեն ներդրումային ռիսկերը, և կապահովվի իրականացման հաջողությունը: Այս չորս բաղադրիչները կընդգրկեն տարբեր պլանավորված արդյունքներ և միջոցառումներ, որոնք ամբողջությամբ նախագծված են վերը թվարկված խոչընդոտները հաղթահարելու համար: Աղյուսակ 2-ում ցույց է տրված, թե նախատեսված աշխատանքներն ինչպես են հաղթահարելու խոչընդոտները: Հաջորդ բաժնում այնուհետև մանրամասն ներկայացվում են արդյունքներն ու միջոցառումները:

Աղյուսակ 2. ՄԱԶԾ-ԳԷՖ առաջարկվող ծրագրի կողմից նախատեսված առանցքային արդյունքներն ու խոչընդոտների հաղթահարումը

Արդյունքը (և համարը)	Խոչընդոտները			
	Տեղեկատվության պակաս	Անբավարար կարողություններ	Ֆինանսավորման բացակայություն	Քաղաքականության բացեր
Լուսավորության հանրային համակարգի էներգափորձաքննություն (Արդյունք 1.1)	X	X		
Ճանաչողական այցեր, համաֆինանսավորում ԳԷՖ-ի ֆինանսավորումից դուրս (Արդյունք 1.2)	X	X		
Տեխնիկական ուսուցում և հանրային իրազեկում (Արդյունք 1.3)	X	X		

Արդյունքը (և համարը)	Խոչընդոտները			
	Տեղեկատվության պակաս	Անբավարար կարողություններ	Ֆինանսավորման բացակայություն	Քաղաքականության բացեր
Փորձնական ծրագրեր (Բաղադրիչ 2)	X	X	X	
Կանաչ լուսավորության ծրագրերի դյուրացում և ֆինանսավորում (Արդյունք 3.1)			X	X
Կանաչ լուսավորության համար քաղաքային համապարփակ ծրագրերի մշակում և իրականացման աջակցություն (Արդյունք 3.2 և Արդյունք 3.3)	X	X		X
ՇԼ-երի փուլային դուրս մղման միջոցառումների մշակում (Արդյունք 4.1)	X	X		X
Լուսատեխնիկական սարքերի նոր և/կամ ընդլայնված տեխնիկական ստանդարտներ և նորմեր (Արդյունք 4.2)	X			X
Պետական գնումների գործընթացի բարելավում (Արդյունք 4.3)		X	X	X

Քաղաքիչ 1: Քաղաքային կանաչ լուսավորության գիտելիքներ և կարողություններ

Այս բաղադրիչը միտված է սահմանել քաղաքային էներգաարդյունավետ լուսավորության ներդրումային ծրագրերի տեխնիկական հիմքերը: Հանրային լուսավորության համակարգերի (գրոսայգիներ, փողոցներ, թաղամասեր և հասարակական շենքեր) փորձաքննությունը հնարավոր էներգախնայողությունների և կանխատեսվող ֆինանսական եկամուտների վերաբերյալ ճշգրիտ տեղեկություններ կտա: Ճանաչողական այցը դեպի Կենտրոնական Եվրոպա, որի ծախսերն ամբողջությամբ կատարվելու են ԳԷՖ-ի շրջանակներից դուրս, կօգնի քաղաքապետարանի ղեկավարությանը ծանոթանալ էներգաարդյունավետ լուսավորության կարևորությանը և նրանց մոտ նոր տեխնիկական և կառավարման կարողություններ կսերմանի քաղաքային լուսավորության առավել էԱ ծրագրեր մշակելու և կառավարելու համար: Ծրագիրը կաջակցի նաև Հայաստանում լուսավորության ոլորտի մասնագետների և շենքեր/շինություններ նախագծողների վերապատրաստման գործընթացին, առնվազն մասամբ՝ էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտի կողմից պարբերաբար առաջարկվող՝ վերապատրաստման դասընթացների հետ համատեղ: Վերջապես, այս բաղադրիչը ՁԼՄ-ներով և այլ ձևերով լուսաբանման միջոցով հանրային իրազեկման գործիք կհանդիսանա:

Արդյունք 1.1 Հանրային լուսավորության համակարգի փորձաքննություն: Ծրագիրը կազմակերպելու է հանրային լուսավորության առնվազն տասը տեխնիկական փորձաքննության նախագծումն ու իրականացումը, որի նպատակն է սահմանել իրականացվելիք վերազինման առանձին փաթեթների համար քաղաքային ծրագրերի և ֆինանսական առաջարկների տեխնիկական հիմքերը:

Արդյունք 1.2 Ճանաչողական այց դեպի Կենտրոնական Եվրոպայում ԳԷՖ-ի Հանրային լուսավորության ծրագիր: Ծրագիրը ԵՔԼԸ-ի, Երևանի քաղաքապետարանի և համապատասխան այլ գործակալությունների ղեկավարության համար ճանաչողական այց կկազմակերպի

դեպի Եվրոպա: Մասնակիցներին կձանոթացնեն քաղաքային լուսավորության նախագծման, կազմակերպման և ֆինանսավորման լավագույն փորձին:

Արդյունք 1.3 Քաղաքային կառույցների, լուսավորման ընկերությունների և շինարարական նախագծային ինստիտուտների մասնագետների համար՝ էներգաարդյունավետ լուսավորության **տեխնիկական վերապատրաստում և կարողությունների հզորացում**: Ծրագիրը Հայաստանում լուսավորության տեխնիկական մասնագետների համար առնվազն երկու կեսօրյա սեմինարներ, կամ նմանատիպ միջոցառումներ է կազմակերպելու ու վարելու, որոնք վերաբերելու են լուսավորության նախագծման, տեղադրման, մոնիտորինգի և սպասարկման տեխնոլոգիաներին և լավագույն փորձին:

Արդյունք 1.4 Քաղաքային կանաչ լուսավորության ծրագրերի մասին **լավ իրազեկվածություն և հանրության կողմից աջակցություն**: Քաղաքային ծրագրերին օժանդակելու, ինչպես նաև բնակելի հատվածում ԷԱ լուսավորությունը խթանելու նպատակով ծրագիրը ՁԼՄ-ների և հանրային իրազեկման այլ միջոցներով կազմակերպելու է էներգաարդյունավետ լուսավորության լուսաբանում: Բացի դա, Ծրագիրը նպաստելու է իրազեկման բարձրացմանը գլոբալ մակարդակով, իր լավագույն փորձը հաղորդելով ԳԷՖ-ՄԱԿ-ի Բնապահպանական ծրագրի (UNEP) «Ինլայտեն» նախաձեռնության շրջանակներում (տես Բաժին I):

Բաղադրիչ 2: Քաղաքային կանաչ լուսավորության փորձնական ծրագրեր

Ծրագիրը, ելնելով էներգափորձաքննության արդյունքներից, տեխնիկական աջակցություն և հավելյալ ներդրումներ տրամադրելու միջոցով օգնելու է Երևանում և ընտրված այլ քաղաքային բնակավայրերում էներգաարդյունավետ հանրային լուսավորության ընտրված փորձնական ծրագրերի իրականացմանը: Ստորև «Հավելյալ օգուտներ գլոբալ շրջակա միջավայրի համար» բաժնում ներկայացված են տեխնիկական պլաններից և ցուցադրական ծրագրերից սպասվելիք արդյունքների մանրամասները:

Փորձնական ծրագրերը ծառայելու են մի քանի նպատակների.

- **Հասնել էներգիայի ուղղակի խնայողության,**
- **Տեխնիկական և ֆինանսական փաստաթղթավարություն՝** հանրային լուսավորության փորձաքննության արդյունքում կատարված կանխատեսումներն ու առաջարկները հաստատելու կամ հերքելու նպատակով,
- Հանրային լուսավորության վերազինման **համապարփակ համաքաղաքային պլանի հիմքերի մշակում**;
- Քաղաքների և երկրի մակարդակի պաշտոնյաների, փորձագետների և էներգետիկ ծառայությունների կապալառուների լուսավորության արդյունավետության ծրագրերի կառավարման և իրականացման **կարողությունների բարելավում**, և վերջիններիս հետագայում ավելի ընդլայնված աշխատանքների իրականացման նախապատրաստում,
- **Ֆինանսական գործընկերների բացահայտում և ֆինանսավորման մեխանիզմների փորձարկում,**
- **Ֆինանսական հաշվետվությունների մշակում՝** լուսավորության արդյունավետության ապագա ընդլայնված ծրագրերի ֆինանսավորման գործընկերների, ժամկետների, պայմանների որոշմանը օգնելու համար (իդեալական տարբերակի դեպքում կրճատում է

ծախսերը և ներդրումային ռիսկի նվազեցման շնորհիվ մեծացնում է ֆինանսավորման հնարավորությունները),

- ԷԱ լուսավորության բնապահպանական և ֆինանսական օգուտների և արտաքին գրավչության մասին **հանրությանը կրթելու և հանրային իրազեկման** գործիքների ստեղծում,
- Որոշ դեպքերում՝ իրազեկվածության բարձրացման, ռիսկի ընկալման նվազեցման և պաշարների ավելացմանը խթանելու միջոցով **շուկայում ԼՂԼ-երի միջնաժամկետ և երկարաժամկետ ներթափանցման արագացում**;

Արդյունք 2.1 Փողոցային լուսավորության ցուցադրական ծրագրերի նախագծում, կատարում և փաստաթղթավորում.

Արդյունք 2.2 Քաղաքներում հանրային շենքերի ցուցադրական ծրագրերի նախագծում, իրականացում և փաստաթղթավորում

Արդյունք 2.3 Արտաքին տարածքների լուսավորության ցուցադրական ծրագրերի նախագծում, իրականացում և փաստաթղթավորում

Ցուցադրական բոլոր միջոցառումների համար ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագիրը կազմակերպելու է քաղաքային իշխանությունների առաջարկությունների հայտերի ներկայացում և ընտրություն, կատարելու է ծրագրերի տեխնիկական կենսունակության, կրկնօրինակման հավանականության և ապահով համաֆինանսավորման առկայության հիման վրա: ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագիրը տրամադրելու է նաև ծրագրի նախագծի վերաբերյալ տեխնիկական հրահանգներ և հետևելու է որակի վերահսկողությանը, մոնիտորինգին, տվյալների հավաքագրմանը, արդյունքների ամփոփմանը և տարածմանը:

Այդ ցուցադրական ծրագրերը, բոլորը միասին, նախատեսվում են տարբեր ելակետային և փոխարինման ենթակա տեխնոլոգիաների համար: Ակնկալվում է, որ լուսադիոդային լամպերը ներքին և արտաքին լուսավորության ցուցադրական աշխատանքների ուշադրության կարևոր առարկան է լինելու: Տեխնիկական մանրամասները և սպասվող միջոցառումները տես ստորև՝ «Հավելյալ օգուտներ՝ գլոբալ շրջակա միջավայրի համար» բաժնում, ինչպես նաև անգլերեն տարբերակի Հավելված E-ում:

Ցուցադրական ծրագրերից ստացված տեխնիկական, ընթացակարգային և ֆինանսական արդյունքների փորձի հիման վրա՝ քաղաքային ծրագրերի և հարակից ֆինանսավորման աջակցություն միջոցով՝ դրանց կրկնօրինակող միջոցառումներ են կազմակերպվելու: Տես՝ Բաղադրիչ 3:

Բաղադրիչ 3. Քաղաքային ԷԱ լուսավորության ծրագրերի համաչափ ընդլայնման ֆինանսական և ինստիտուցիոնալ մեխանիզմները

Ծրագրի թիմը և Երևանի քաղաքային իշխանությունները 1-ին և 2-րդ Բաղադրիչների տեխնիկական և ֆինանսական վերլուծության արդյունքների հիման վրա մշակելու և իրականացնելու են հանրային լուսավորության արդիականացման համապարփակ ծրագիր: Այս միջոցառումը կարող է կատարվել փուլերով. երբ՝ ծրագրի նախնական մասերից մի քանիսը մշակվում են փորձաքննությունից հետո և մինչև ցուցադրական ծրագրերի ավարտը և երբ՝ ցուցադրական ծրագրի առաջին տարվա ստացված արդյունքների հիման վրա հետագա տարբեր են մշակվում: Երևանում կատարված աշխատանքի հիման վրա ծրագրի երրորդ բաղադրիչը

կաջակցի նաև Հայաստանի այլ քաղաքային բնակավայրերում նմանատիպ քաղաքային ծրագրերի իրականացմանը: ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագիրն առանցքային դեր է խաղալու բոլոր քաղաքապետարանների համար՝ ծրագրերի մշակման, համակարգման և ֆինանսավորման դյուրացման գործում, իսկ իրականացումը կատարվելու է անմիջապես քաղաքապետարանների ենթակա կազմակերպությունների կողմից:

Բոլոր ոլորտներում ծրագիրը կապահովի լուսավորության արդյունավետությանն ուղղված բարեփոխումների համար քաղաքային բյուջեներից հատկացվող միջոցների արդարացումը և քարոզչությունը: Շատ հավանական է, սակայն, որ ելակետային ֆինանսավորումը չբավականացնի քաղաքներում ԷԱ լուսավորության ծրագրերի ընդլայնման համար: Այդ դեպքում ֆինանսավորման այլ մեխանիզմների անհրաժեշտություն կառաջանա: Հետևաբար, ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագիրը ֆինանսավորման լրացուցիչ լծակներ կգործադրի քաղաքային լուսավորության ծրագրերին աջակցելու համար՝ օգտագործելով տարբեր մոտեցումներ, որոնք կախված կլինեն ոլորտից և ելակետային պայմաններից:

Նոր փողոցային լուսավորություն

ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագիրը կմշակի և կօգնի առաջնորդել էներգաարդյունավետ լուսավորության կատարելագործումից խնայված միջոցների հավաքագրման և կրկին ներդրման **վերականգնվող հիմնադրամի մեխանիզմի** գործունեությունը: Երևանի քաղաքապետարանն արդեն արտահայտվել է խնայված միջոցները համակարգի հետագա բարելավման մեջ կրկին ներդրելու իր պատրաստակամության մասին: Ծրագիրը կաշխատի քաղաքապետարանի և ԵՔԼԸ-ի հետ նպատակային հիմնադրամի պարամետրերը որոշելու և նրա զարգացումն ու գործունեությունը պլանավորելու համար:

Սպասվելիք խնայողությունները միայն փողոցային լուսավորության ցուցադրական ծրագրերից մեկ տարվա ընթացքում կապահովեն մոտ 100.000 ԱՄՆ դոլար (տես Բ.3-ը, որտեղ ներկայացվում է ծախսերի արդյունավետությունը): Եթե այդ խնայողությունները կարելի լինի գնահատել և դրանք առանձնացնել, ապա ծրագիրն ակնկալում է, որ վերականգնվող հիմնադրամը կարող է ֆինանսավորել փողոցային ԷԱ լուսավորության նոր ծրագրերի համար անհրաժեշտ հավելյալ ծախսերի զգալի մասը:

Ներկա փողոցային լուսավորությունը

Բնարկե հնարավոր է, որ վերականգնվող հիմնադրամը ֆինանսավորեր նաև ներկայիս փողոցային լուսավորության արդիականացման ծախսերի որոշ մասը: Ներկայիս փողոցային լուսավորության արդիականացման կարիքները մեծ են և վերականգնվող հիմնադրամի կողմից Երևանի, կամ այլ վայրերի բոլոր պահանջների բավարարումը իրատեսական չէ: Հետևաբար, ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագիրը օժանդակելու է քաղաքապետարաններին՝ արտաքին ֆինանսավորման համար հայտեր նախապատրաստելու հարցում:

Ծրագիրը, մասնավորապես, աշխատելու է Երևանի քաղաքապետարանի և ԵՔԼԸ-ի հետ ԷԱ ֆինանսավորման համար Հայաստանում առկա զանազան աղբյուրներից մեկին, այդ թվում՝ ՎՋԵԲ, ՄՖԿ կամ GGF, վարկային հայտ պատրաստելու նպատակով: Ցուցադրական ծրագրերը կօգնեն ապացուցել, որ առաջարկվող միջոցառման ֆինանսավորումը բանկերի կողմից՝ ձեռնտու և ընդունելի տարբերակ է:

ՀՎԷԷՀ-ի կողմից իրականացվող՝ Համաշխարհային բանկի ծրագրի աջակցությամբ՝ (ստորև տես՝ Բաժին Ա.7-ում քննարկվող ՀՎԷԷՀ-ի հետ համագործակցության առաջարկը) ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագիրը կօգնի հեշտացնել **ԷԾՄԸ-ների ֆինանսավորումը** Սևանի և Սպիտակի փոքր քաղաքա-

պետարաններում: Սա անելու ընթացքում ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագիրը կօգնի հարմարեցնել և Հայաստանին ներկայացնել Ռուսաստանում ՄԱԶԾ-ԳԷՖ լուսավորության ծրագրի կողմից կիրառված գործընթացը, որով հաջողվել էր էներգետիկ ցուցանիշների բարելավման պայմանագրեր կազմել և ապահովել ԷԾՄԸ-ների ֆինանսավորումը Նիժնի Նովգորոդում նմանօրինակ քաղաքային լուսավորության տեխնիկական վերազինման համար:

ԷԱ լուսավորությունը շենքերում

Մինչ օրս, ՀՎԷԷՀ-ի կողմից իրականացվող՝ ՀԲ ծրագիրը հասարակական շենքերում լուսավորության էներգաարդյունավետության ծրագրերին չի աջակցել մասամբ այն պատճառով, որ ԷԱ լուսավորության արդիականացման մեջ բանկային ներդրումների գրավչության ապացույց դեռ չի ներկայացվել: ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագիրը իր փորձաքննության և ցուցադրական ծրագրերի արդյունքների հիման վրա մշակելու է հիմնավորված, բանկերի համար գրավիչ առաջարկություններ, որոնք ներկայացվելու են Հիմնադրամին՝ ծրագրերի որակավորման նպատակով: Այս խոդովակով կատարվող ֆինանսավորումը հատկապես նպատակահարմար կլիներ շենքերի համար, հաշվի առնելով այն, որ այս ոլորտը հազիվ թե համապատասխաներ խոշոր ֆինանսավորողների չափանիշներին:

ՄԱԶԾ-ը և ՀՎԷԷՀ-ը արդեն պայմանավորվել են միմյանց փոխադարձ օժանդակություն տրամադրել, բյուջեների ձևավորման, ֆինանսավորման և գնումների աշխատանքները միասին կատարելուն: ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագիրը և ՀՎԷԷՀ-ը, միասին, նաև տեխնիկական աջակցություն են տրամադրելու և զարգացնելու են ԷԾՄԸ-ների կարողությունները ոչ միայն արդիականացման առանձին աշխատանքների հաջող իրականացումն ապահովելու, այլ նաև, ընդհանրապես, էներգետիկ արդյունավետության ծառայությունների մատուցման բարելավման և ընդլայնման և, ի վերջո, էներգետիկ արդյունավետության ծառայությունների կրկնօրինակելի և կայուն մոդելների մշակման և փորձարկման նպատակով:

Արտաքին լուսավորություն

Երևանի և մյուս շահագրգիռ քաղաքապետարանների հետ համատեղ՝ ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագիրը լուսավորություն պարտադիր չափանիշներ կմշակի, որոնք պետք է պահպանվեն կոնցեսիոն պայմանագրերով գրոսայգիներ, ավտոկայանատեղեր և այլ բացօթյա տարածքներ կառուցապատող ընկերությունների կողմից: Գնումների վրա հիմնված այս մոտեցումը ԷԱ լուսավորություն ֆինանսավորման բեռն ու ռիսկերը կտեղափոխի կառուցապատողի ուսերին, սակայն, ելնելով կոնցեսիայի չափերից, կարելի է կանխատեսել, որ այդ ընկերությունների համար լուսավորության նման պահանջները տանելի կլինեն:

Արդյունք 3.1 ԷԱ քաղաքային լուսավորության ծրագրերի համար մասնավոր, միջազգային և քաղաքային ֆինանսավորման աջակցություն

Ինչպես արդեն վերը ներկայացվել է, ծրագիրը տեխնիկական աջակցություն է տրամադրելու և դյուրացնելու է քաղաքապետարանների կողմից տարբեր պոտենցիալ աղբյուրներին ֆինանսական առաջարկների ներկայացումը: Հատուկ ձևաչափերը և առաջարկների բովանդակությունը կախված կլինի տվյալ ծրագրի կոնկրետ առանձնահատկություններից, բայց, ընդհանուր առմամբ, այս Արդյունքում նախատեսվում է ընդգրկել աշխատանքներ հետևյալ բոլոր ոլորտներում.

- Ներդրողների, վարկատուների, կամ ԷԾՄԸ-ների ֆինանսական ռիսկերի նվազեցման նպատակով ծրագրի միջոցների օգտագործման հնարավորության գնահատում,

- Երևանում ԷԱ լուսավորության ներդրումների համար ֆինանսական ինստիտուտներին և գրասենյակներին (ՎՁԵԲ, ՄՖԿ, GCF «Կանաչ կլիմա» հիմնադրամ) ուղղվող վարկային հայտերի մշակում և ներկայացում,
- Առնվազն մեկ ԷԾՄԸ-ի համար մրցույթի կազմակերպում՝ Երևանից դուրս առնվազն մեկ քաղաքում և, հնարավորության դեպքում նաև, հենց Երևանում, քաղաքային լուսավորության ծրագրի մի մասի կամ ամբողջի ենթագաղաղային արդիականացման համակարգ տրամադրելու և տեղադրելու համար,
- Ծրագրի իրականացումից առաջացած խնայված միջոցները հավաքագրելու և կրկին ներդրելու նպատակով՝ Քաղաքային վերականգնվող հիմնադրամի մեխանիզմների նախագծում,
- ՀՎԷԷՀ-ի, ՄՖԿ-ի և/կամ այլ միջազգային կառույցի հետ բանակցությունների դյուրացում, որոնք կարող էին ֆինանսավորել քաղաքային լուսավորության, այդ թվում նաև շենքերի լուսավորության, արդիականացման աշխատանքները,
- Լուսավորության էներգետիկական ցուցանիշների համար գնումների կանոնների մշակում, որոնք ներկայացվելու է որպես Երևանում զբոսայգիների և այլ բացօդային տարածքների կառուցապատման կոնցեսիայի մի մասը.

Արդյունք 3.2 Երևանում հանրային լուսավորության **համաքաղաքային ծրագրի մշակում և հաստատում:** 1-ին և 2-րդ Բաղադրիչների տեխնիկական արդյունքների, ինչպես նաև Արդյունք 3.1-ին առնչվող ֆինանսավորման ջանքերի արդյունքների հիման վրա ծրագիրը կազակցի Երևանի քաղաքապետարանին և ԵՔԼԸ-ին մշակելու համապարփակ համաքաղաքային հանրային լուսավորության արդիականացման մի ծրագիր՝ Արդյունք 3.1 շրջանակներում մշակված մեխանիզմների միջոցով ձեռք բերված ֆինանսավորման աղբյուրների օգնությամբ:

Արդյունք 3.3 **Նմանօրինակ ծրագրերի իրականացման դյուրացումը** Հայաստանի Հանրապետության այլ քաղաքներում: Երևանի օրինակից քաղաքում դասերից ելնելով, ինչպես նաև ընդունելով յուրաքանչյուր մարզի առանձնահատկությունները, Ծրագիրը կազակցի նաև ՀՀ-ի այլ քաղաքներում նմանօրինակ ծրագրերի իրականացմանը: Ինչպես Արդյունք 3.2-ի դեպքում էր, այս արդյունքը նույնպես կազմված կլինի ընթացիկ սպասարկումից և վերանորոգումից, մոնիտորինգից և գնահատումից:

Բաղադրիչ 4. ԷԱ լուսավորության ազգային քաղաքականություններ, նորմեր և ստանդարտներ

Ծրագրի չորրորդ բաղադրիչը կենտրոնանալու է Հայաստանում ԷԱ լուսավորությունը խթանելու քաղաքականության ծավալուն գործիքների մշակման և իրականացման վրա: Այս ծրագրային գործիքները ներառում են ՇԼ-երի և այլ անարդյունավետ լուսատեխնիկական սարքերի փուլային դուրս մղման մասին օրենսդրությունը, լուսատեխնիկական սարքերի տեխնիկական ստանդարտները, շենքերի էներգետիկական ցուցանիշների և առողջապահական նորմերում լուսավորության պայմանները, և պետական կազմակերպությունների համար գնումների օրենքը և հարակից կանոնակարգերը: Նման քաղաքականությունը կարող էր ոչ միայն աջակցել Բաղադրիչ 3-ում դիտարկվող քաղաքային լուսավորություն ծրագրերին, այն կարող էր նաև միջճյուղային լայն ազդեցություն ունենալ, հատկապես՝ հասարակական և բնակելի շենքերի հատվածում:

Քաղաքականությանն առնչվող այս միջոցառումներն, անշուշտ, պետք է լիովին համահունչ լինեն երկրի իրավական և քաղաքական գործընթացներին և առաջնահերթություններին: Այս միջոցառումները միտված են ամբողջություն կազմելու՝ փոխադարձաբար ամրապնդելով միմյանց: Սակայն այս քաղաքականություններից յուրաքանչյուրը պետք է ունենա նաև իր անհատական արդյունավետությունը, եթե նույնիսկ պարզվի, որ նրանցից մեկը, կամ ավելին, հնարավոր չէ իրականացնել:

ՀՀ կառավարության կողմից ընդունված օրենսդրությունը կարող է ՇԼ-երի և այլ անարդյունավետ լուսատեխնիկական սարքերի փուլային դուրս մղման քաղաքականության համապատասխան մեխանիզմը հանդիսանալ: ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագիրը կարող է այս օրենսդրության նախագծման մեջ առանցքային դերակատարություն ունենալ, այդ թվում՝ տեխնիկական տեղեկություններ հավաքելու, ազգային և միջազգային մասնագիտական փորձ տրամադրելու, սահմանելու կամ հիմնավորելու միջոցով առաջարկվող փուլային դուրս մղման դրույթները, և համակարգելով գործընկերների և այլ շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ պետական գերատեսչությունների, ինչպես նաև այլ աջակիցների գործունեությունը:

ՇԼ-երի փուլային արգելքի ընդունումը բնավ դյուրին չէ թե տեխնիկապես և թե քաղաքականապես: Եթե ՇԼ-երը աստիճանաբար դուրս մղվեն, ապա դրանք կարող են կարճ ժամկետում փոխարինվել հիմնականում կոմպակտ լյումինիսցենտային լույսի լամպերով (ԿԼԼ-եր), որոնք, ինչպես կարելի էր ակնկալել, տարբեր պատճառներով շահագրգիռ կողմերից շատերի մոտ ժողովրդականություն չեն վայելում: Հայաստանում դրանց նախնական գինը մոտ հինգ անգամ ավելի բարձր է, քան համարժեք ՇԼ-երինը: Չնայած դրանք ավելի քիչ էներգիա են ծախսում և ավելի երկարակյաց են, ինչը տեսականորեն պետք է մի քանի անգամ ավելի փոխհատուցի նախնական արժեքի տարբերությունը, Հայաստանում վաճառվող ԿԼԼ-ներից շատերի որակը և հուսալիության ցածր է, և այդ հանգամանքը սպառողների մոտ կասկածի տակ է դնում նման փոխհատուցման իրական հնարավորությունը: Ավելին, տեսողական առումով շատերի մոտ ԿԼԼ-ները դեռևս համարվում են անհարմարավետ և կենցաղային օգտագործման համար պակաս օգտակար, քան ՇԼ-երը, դրանց ձևի և յուրօրինակ սառը լույսի պատճառով:

ԿԼԼ-ները նաև սնդիկ են պարունակում, որը առկա է ինչպես գոլորշու, այնպես էլ լամպի ներքին պատերին կպած ֆոսֆորի փոշու մեջ: ՇԼ-երի արգելքն, այդպիսով, զգալիորեն կավելացնի քաղաքային թափոնների մեջ սնդիկի պարունակությունը՝ հնացած և կոտորված ԿԼԼ-ների պատճառով: Ներկա դրությամբ, սակայն, Հայաստանում հատուկ հարմարություններ չկան սնդիկի թափոնների տարանջատման, պահեստավորման և վերամշակման համար: Հետևաբար, ՇԼ-երի փուլային վերացման օրենսդրության հաստատման հետ զուգահեռ պետք է ունենալ նաև հնացած ցերեկային լույսի լամպերի կառավարման առողջ պլան և, հավանաբար, կանոնակարգեր:

Հետևաբար, վերլուծական առումով փուլային դուրս մղումը արդարացնելու խնդիրը ծրագրի համար շատ բարդ, և քաղաքականապես բավական զգայուն է լինելու: Լավագույն հնարավորություններից է փուլային դուրս մղման կարգի ընդունումը, որը լամպերի լույսի հզորությունը կսահմանափակել լուսային հոսքի որոշակի տիրույթում: Այս մոտեցումը, որը ընդունվել է Միացյալ Նահանգներում, թույլ է տալիս շարունակել ՇԼ-երի օգտագործումը, սակայն մոտ 25-ից 30 տոկոսով կրճատելով էներգիայի սպառումը, որը կատարվում է, օրինակ, հետևյալ ճանապարհով. նոր սերնդի 72 Վտ ՇԼ-երը փոխարինում են 100 Վտ լամպերին, 53 Վտ լամպերը փոխարինում են՝ 75 Վտ, և 43 Վտ փոխարինում են 60 Վտ լամպերին, որից լույսի քանակը և որակը չի տուժում, կամ քիչ է տուժում: Այս լուծումը, տեխնիկական ԷԱ ներուժի տեսանկյունից լինելով ավելի պակաս օպտիմալ, քան ԿԼԼ-ի լիարժեք անցումը ԼԴԼ-ին, կարող է զգալիորեն թեթևացնել քաղաքական հակասությունները, մեղմել սնդիկին առնչվող մտահոգությունները և, ընդհանուր առմամբ, նվազեցնել այն մտավախությունը, թե փուլային դուրս մղման ջանքերը կարող են ոչնչի չհանգեցնել:

Ելնելով միջազգային փորձից՝ դեռ շատ հնարավոր է, որ զուտ տնտեսական և բնապահպանական շահերն իսկապես հանգեցնեն փուլային դուրս մղման ավելի առաջավոր ժամանակացույցի, հատկապես հաշվի առնելով արտադրանքի որակի և սնդիկի պահեստավորման համար նախատեսվող համապատասխան հարակից դրույթների պահանջները: Այլ երկրների օրինակն ինքնին, կարելի է սպասել, իսկապես հզոր ազդեցություն կունենա այս

ուղորտում Հայաստանի քաղաքականության ուղղությունների վրա: Ինչպես նշվել է, Հայաստանի Հանրապետությունը արդեն դիտարկում է լուսավորություն հետ կապված որոշ իրավական ակտերի ներդաշնակեցման հարցը ԵՄ համապատասխան օրենքների հետ (տես՝ ելակետային ծրագրի մասին բաժինը): Ռուսաստանը և Ղազախստանը նույնպես կարող էին Հայաստանի համար օրինակ ծառայել, քանի որ երկուսն էլ արդեն ընդունել են ՇԼ-երի փուլային դուրս մղման օրենքը, երկու երկրներում էլ ներկայումս փուլային դուրս մղումն իրականացվում է ՄԱԶԾ-ԳԷՖ նմանատիպ ծրագրերի աջակցությամբ:

Բացի փուլային դուրս մղման գաղափարի արդարացումից և քարոզչությունից, ծրագիրը կհամակարգի աշխատանքային խմբի ձևավորումը, որն առաջավոր լուսատեխնիկական արտադրանքի, այդ թվում՝ ԿԼԼ-ի և ԼԴԼ-ի համար տեխնիկական ստանդարտներ է մշակելու: Նախատեսվում է, որ այդ տեխնիկական ստանդարտներն արդյունավետության, կատարողական ցուցանիշների, շահագործման ժամկետների և սնդիկի պարունակության չափանիշների պահանջներ են պարունակելու: Դրանցով նաև կարգավորվելու են փորձարկման և համապատասխանության հավաստման ընթացակարգերը:

Նորմերին և կանոններին վերաբերող միջոցառումների շրջանակներում նախատեսվում են նաև առաջարկություններ անել ՀՀ քաղաքաշինության նախարարությանը բարելավելու շենքերի էներգաարդյունավետության և լուսավորություն վերաբերյալ շինարարական նորմերում սահմանված «Բնական և արհեստական լուսավորության» պահանջները: Այդ աշխատանքն իրականացվելու է ՄԱԶԾ-ԳԷՖ-ի ընթացիկ «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ծրագրի հետ փոխգործակցությամբ, որը սերտորեն առնչվում է այդ նախարարությանը և վերջինիս շինարարական նորմերի համար պատասխանատու աշխատակազմին:

Ծրագիրը նաև հետազոտելու է ԼԴԼ լուսատու սարքերի վերաբերյալ առողջապահական նորմերի պահանջները: Տարածաշրջանի այլ երկրներում (օրինակ՝ Ղազախստանում) ԼԴԼ-երն արգելվում է օգտագործել որոշ տարածքների ներսում, քանի որ դրանց լուսավորություն որակն ընկալվում է որպես թերի: ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագիրը Ղազախստանում մտադիր է մշակել և առաջարկել նոր պահանջներ, որոնցով թույլատրվելու է ԼԴԼ-երի լայն կիրառումը: ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագիրը Հայաստանում համանման գործունեություն կիրականացնի՝ հնարավորության դեպքում օգտվելով Ղազախստանի փորձից:

Վերջապես, ծրագիրը կաշխատի խթանել պետական կազմակերպությունների կողմից էներգաարդյունավետ լուսատեխնիկական սարքերի մեծաքանակ գնումների ընդլայնումը: Այդ ջանքերը պետք է ազգային օրենսդրության հետ համատեղելի լինեն: Գնումների օրենքն, ինքնին, բավականին լայնածավալ և ընթացակարգային է՝ առանց առանձին ապրանքատեսակների համար կիրառվող տեխնիկական չափանիշների կամ էներգետիկական ցուցանիշների պահանջների: Ծրագրի թիմը որոշել է, որ օրենքի մեջ փոփոխություններ կատարելու ձգտումը կարող է արդյունքի չբերել: Դրա փոխարեն թիմը մշակելու և առաջարկելու է նոր կանոնակարգ և/կամ ուղեցույց, որով սահմանվելու է, թե ինչպես լավագույնս ընտրել լուսավորություն ծառայությունները և սարքավորումները, ինչպես նաև հնարավորության դեպքում շահագործման ժամկետի արժեքի վերլուծության պահանջներ և կոնկրետ չափանիշներ են ներդրվելու: Այս մոտեցումը նման է ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագրերի կողմից տարածաշրջանի այլ վայրերում ԷԱ գնումներին առնչվող նախատեսված աշխատանքին:

Արդյունք 4.1 ՇԼ-երի փուլային դուրս մղում և/կամ ԷԱ լուսավորության վերաբերյալ այլ հիմնական ազգային քաղաքականություններ

Ծրագիրը մի բազմակողմանի դիտարկում կիրականացնի՝ ապահովելով Հայաստանում անարդյունավետ ՇԼ-երի փուլային դուրս մղման տեխնիկական և քաղաքական հիմնավորումը: Այս դիտարկումը ներ է առնելու ՇԼ-երի էներգիայի սպառման, շահագործման ժամկետի

ծախսերի և բնապահպանական հետևանքների համեմատական վերլուծությունը և Հայաստանում դրանց փոխարինող տեխնոլոգիաների կիրառման, այդ թվում՝ ԿԼԼ և ԼԴԼ-եր, հնարավորությունը: Այս դիտարկման մեջ ներկայացվելու են նաև ՇԼ-երի փուլային դուրս մղման վերաբեյալ օրենքների, կանոնակարգերի և կիրառման մեխանիզմների, ինչպես նաև ԷԱ լուսավորությանը խթանող շուկայական կամ հարկային նախադրյալների միջազգային փորձը: Այնուհետև, դիտարկման արդյունքների հիման վրա, ծրագիրը կաջակցի ԷԲՊՆ-ին մշակել առաջարկվող օրենսդրության և կիրառման մեխանիզմների նախագծեր և գորակցել դրանց ընդունման գործընթացին:

Այս արդյունքում ներառվելու է նաև սնդիկ պարունակող կոտրված լամպերի կառավարման միջազգային լավագույն փորձը և, դրա հիման վրա, Հայաստանում համապատասխան ծրագրերի մշակման և դրանց ընդունման աջակցությունը:

Արդյունք 4.2 Շենքերում և շինություններում լուսավորություն որակին, լուսավորություն կառուցվածքին և հանրային առողջության ոլորտում լուսավորություն խնդիրներին առնչվող **նոր ստանդարտների մշակում և ընդունում:** Ակնկալվում է, որ ՇԼ-երի փուլային դուրս մղման և այլ հիմնական ազգային քաղաքականությունների ընդունումը ԷԱ լուսավորությանն առնչվող հարակից տեխնիկական ստանդարտների և/կամ շինարարական նորմերի անհրաժեշտություն կառաջացնի: ՄԱԶՕ-ԳԷՖ ծրագիրն աջակցելու է այն բոլոր համապատասխան ստանդարտների ընդունմանը, որոնք, ամենայն հավանականությամբ, վերաբերելու են էներգետիկական ցուցանիշներին, սնդիկի պարունակությանը, շահագործման ժամկետներին և լուսավորություն որակին և որոնցով ցուցանիշների վերաբեյալ չափանիշների հետ նաև սահմանվելու են փորձարկման ընթացակարգերի պահանջները:

Արդյունք 4.3. Պետական կազմակերպությունների կողմից էներգաարդյունավետ լուսատեխնիկական սարքերի **գնումների նոր կանոնների մշակումը և ընդունումը:** Ելնելով այլ երկրներում, այդ թվում՝ եվրոպական երկրներում, նաև Ռուսաստանում և Ղազախստանում (որտեղ գնումները ՄԱԶՕ-ԳԷՖ նմանօրինակ ծրագրերի ուղղություն ուղորտներից մեկն է) կիրառվող լավագույն փորձից, ծրագիրը Հայաստանում մշակելու և կազմելու է առաջարկվող այն գործընթացները և չափանիշները, որոնք վերաբերելու են նաև ցուցանիշներին և շահագործման ժամկետի արժեքին, և կիրառվելու են պետական գերատեսչությունների կողմից լուսատեխնիկական արտադրանքի մեծածավալ գնումների դեպքում:

Ակնկալվող օգուտների ամփոփ բովանդակությունը

Ծրագիրը, լուսավորության ոլորտում էլեկտրաէներգիայի ավելի արդյունավետ սպառման ճանապարհով ՋԳ արտանետումներից խուսափելու միջոցով, նախատեսվում է գլոբալ բնապահպանական օգուտներ քաղել: Ցուցադրական ծրագրերը անմիջականորեն հանգեցնելու են մոտ 10,000 տոննա CO₂ արտանետումների կրճատմանը և քաղաքային լուսավորություն նմանօրինակ ծրագրերի իրականացման միջոցով ընդհանուր առմամբ, կրճատումը կազմելու է մոտ 135,000 տոննա: Ամենամեծ օգուտներն առաջանալու են ներկայումս բնակելի հատվածում լայնորեն օգտագործվող անարդյունավետ ՇԼ-երի փուլային վերացումից: Ծրագրի գործարկման օրվանից սկսած՝ տասը տարիների ընթացքում, ակնկալվում է CO₂ արտանետումները կրճատել 500,000-ից մինչև 1 միլիոն տոննայով: Այդ կանխատեսումներն ամփոփված են ստորև՝ Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Գլոբալ շրջակա միջավայրի համար կանխատեսվող հավելյալ օգուտները

(ստորև ներկայացված տվյալների թվերը կլորացված են)

Արտանետումների կրճատման տեսակները և համապատասխան արդյունքը	քանակը (տոննա CO ₂)	կրճատման ժամանակացույցը
Ուղղակի Ցուցադրական ծրագրեր	10,000	Ծրագրի ընթացքում ձեռնարկված միջոցառումները, տարբեր միջոցառումների ընթացքում ստացված խնայողությունները
Անուղղակի, վարից՝ վեր Փորձնական ծրագրերի կրկնօրինակումը՝ քաղաքային ծրագրերի միջոցով	135,000	Ծրագրի գործունեության ընթացքում ընդունված և մեկնարկված ծրագրերը, տարբեր միջոցառումների ընթացքում ստացված խնայողությունները
Անուղղակի, վերից՝ վար Ազգային միջոցառումային քաղաքականություն, ներառյալ ՇԼ-երի փուլային վերացումը	500,000-ից (չափավոր փուլային վերացում) մինչև 1,000,000 (ազդեհիվ փուլային վերացում)	Քաղաքականություններ՝ որոնք մշակվելու և ընդունվելու են ծրագրի գործունեության ընթացքում: Ծրագրի մեկնարկի օրվանից՝ 10 տարվա ընթացքում հաշվարկված կրճատումները: Տասը տարուց նետո, նույնպես, կարելի է խնայողություններ ակնկալել, սակայն դրանք այստեղ ցույց չեն տրված:

Հարակից նախաձեռնությունների հետ համակարգում

Առաջարկվող ծրագիրը սերտորեն համագործակցելու է Հայաստանում ՄԱԶԾ-ԳԷՖ երկու այլ ընթացիկ ԷԱ ծրագրերի հետ: ՄԱԶԾ-ԳԷՖ լայնամասշտաբ «Քաղաքային ջեռուցման և տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» ծրագիրը, որն ավարտվելու է մոտավորապես լուսավորություն ծրագրի գործարկման սկզբին, արդեն արժեքավոր կապեր է ստեղծում գործընկերների հետ, որոնց թվում են բնակարանների սեփականատերերի (համատիրությունների) միությունները և Երևանի քաղաքապետարանը: ՄԱԶԾ-ԳԷՖ լայնամասշտաբ «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ծրագիրը (ՇԷԱԲ), նույնպես, իր համագործակցային աջակցությունն է առաջարկելու շինարարական նորմերի ընդունման և հանրային շենքերում ցուցադրական ծրագրերի կազմակերպման միջոցառումներին: ՇԷԱԲ ծրագրի որոշ նպատակներ համահունչ են առաջարկվող ծրագրի նպատակներին, հետևաբար՝ համատեղ ջանքերը (օրինակ՝ շինարարական նորմերում լուսավորության նվազագույն արդյունավետության ստանդարտների ինտեգրումը) երկուսի համար էլ փոխշահավետ կլինի: Մասնավորապես, ՄԱԶԾ-ԳԷՖ-ի «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ծրագրի ուղղվածությունը շենքի պատող կոնստրուկցիաներն են և այն ներդնելու է նոր պարտադիր ԷԱ շինարարական նորմեր, որոնք էներգետիկ ցուցանիշների խիստ պահանջներ են սահմանելու (լուսավորություն նկատմամբ՝ նույնպես): Առաջարկվող «Քաղաքային կանաչ լուսավորություն» ծրագիրը գալիս է լրացնելու այդ ջանքերն՝ աշխատելով «Արհեստական և բնական լուսավորվածություն» անունը կրող նորմերի վրա և, հնարավոր է նաև, «քաղաքների, գյուղերի և գյուղական բնակավայրերի արտաքին լուսավորություն» նախագծի վրա: Բոլոր երեք ծրագրերը վերահսկվելու են ՄԱԶԾ Կլիմայի փոփոխության ծրագրի համակարգողի և Հայաստանում ՄԱԶԾ բնապահպանության և էներգետիկայի ծրագրերի ղեկավարի կողմից:

Ծրագրի նախապատրաստական շրջանում ՄԱԶԾ-ը հանդիպել է Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի (ՀՎԷԷՀ) անձնակազմի հետ: Կողմերը պայմանավորվել են փոխադարձ աջակցություն ցուցաբերել ՄԱԶԾ-ԳԷՖ լուսավորության նոր ծրագրի և ՀՎԷԷՀ-ի կողմից կառավարող ԳԷՖ-ի հավանությանը արժանացած՝ ՀԲ նախաձեռնության միջև, որը կոչվում է Հայաստանի էներգաարդյունավետության ծրագիր: Այս ծրագիրը կառավարելու է ՀԲ միջոցները, դրանք ԷԱ ծրագրեր իրականացնելու նպատակով որպես վարկեր տրամադրելով քաղաքապետարաններին և այլ պետական կազմակերպություններին, ինչին ՀՎԷԷՀ միանալու է նաև էներգետիկ ծառայությունների իր առաջարկներով: ՀՎԷԷՀ-ը ծրագրի պահանջներին համապատասխանող սոցիալական օբյեկտների հետ կմտնի էներգետիկ ծառայությունների պայմանագրային հարաբերությունների մեջ, և ըստ այս պայմանագրերի՝ ՀՎԷԷՀ-ը ֆինանսավորում է տրամադրելու, իսկ սոցիալական և այլ հասարակական օբյեկտները պայմանագրի գործունեության ամբողջ ընթացքում վճարումներ են կատարելու, որը հավասար է լինելու էներգիայի բազային ծախսերի արժեքին: ՀՎԷԷՀ այդ ստացված վճարումներից՝ վերոհիշյալ օբյեկտների անունից, վճարելու է սպառված էներգիայի հաշիվները և խնայված տարբերությամբ փոխհատուցելու է իր սեփական ներդրումների ծախսերը և մատուցված ծառայությունների վարձը: ՀՎԷԷՀ առաջարկում է ԷԱ միջոցառումներ, սակայն անելիքը չի թելադրում, ապահովելով ծրագրի նախագծի զգալի ձկունություն հայտ ներկայացնողների համար: ՀՎԷԷՀ-ը, կապալառուների ներգրավման և աջակցության միջոցով, նաև աջակցում է Հայաստանում էներգետիկ ծառայությունների ոլորտի զարգացմանը:

Մինչ օրս ՀՎԷԷՀ-ը չի զբաղվել կոնկրետ ԷԱ լուսավորության աշխատանքներով, սակայն ֆինանսական անհրաժեշտ հիմնավորմամբ մշակված ծրագրերի առկայության դեպքում, անշուշտ, քաղաքապետարաններին, նրանց կապալառու լուսավորություն ընկերություններին կամ ԷԾՄԸ-ներին շատ հարմար կլինեն այդ հարցով ՀՎԷԷՀ-ին հայտ ներկայացնել: ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագիրը աջակցելու է այդ կազմակերպություններին առաջարկներ նախապատրաստել և դիմել ՀՎԷԷՀ-ին և համակարգել տեխնիկական աջակցության, մոնիտորինգի և գնահատման գործընթացները:

Երևանի քաղաքային լուսավորության ֆինանսավորումը ապահովման համար ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագիրը համատեղ աշխատելու է նաև ՎՋԵԲ-ի հետ: Հայաստանում ՎՋԵԲ-ի և ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագրերի միջև այս տեսակի համակարգման դրական օրինակ կա, հատկապես, բնակելի հատվածում, որտեղ՝ քաղաքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի իրականացման ընթացքում ՄԱԶԾ-ը ՎՋԵԲ-ին գործիքային աջակցություն էր մատուցել: ՄԱԶԾ-ը նաև ղեկավարում է Հայաստանի ու Վրաստանի միջև տրանսպորտային կապերի բարելավման համար ՎՋԵԲ ներդրումների կառուցվածքի նախագծման աշխատանքները:

Ծրագիրը ձգտում է փոխշահավետ և սերտ համագործակցության ԳԷՖ-ՄԱԿ-ի Բնապահպանական ծրագրի (UNEP) «Ինլայտեն» նախաձեռնության, ինչպես նաև համապատասխան այլ միջազգային հաստատությունների և ծրագրերի հետ, ինչպիսիսն են Համատեղ մակնշման և սարքավորումների ստանդարտների ծրագիրը (Collaborative Labelling and Appliance Standards Program, CLASP) և ԵՄ Լուսավորության ասոցիացիան (Lighting Association): Մասնավորապես, որակի չափանիշները, ինչպես նաև Բաղադրիչ 4-ի շրջանակներում ներդրվելիք պահանջվող փորձարկումների մեթոդաբանությունը և կիրարկման մեխանիզմները պետք է ընդունվեն «Ինլայտեն» նախաձեռնության և այլ միջազգային գործընկերների կողմից մշակված միջազգային լավագույն փորձի և չափանիշների հիման վրա: Ծրագրի նախապատրաստական փուլում ձեռք է բերվել «Ինլայտեն» նախաձեռնության հետ համաձայնությունը համագործակցության և փորձի փոխանակման ոլորտում: Ավելին, Ծրագիրն արդեն իսկ օգտվել է «Ինլայտեն» նախաձեռնության ուղղորդումից և աջակցությունից ըստ սեկտորների ՋԳ հաշվարկների առումով: Իր հերթին, Ծրագիրը տրամադրելու է իր գործունեությունից առաջացած բոլոր գիտելիքային արդյունքները,

առանձին դեպքերի ուսումնասիրությունները և լավագույն փորձը «Ինլայտեն» նախաձեռնության «գիտելիքի կառավարման հարթակում» տեղադրելու միջոցով լուսավորության ԷԱ միջազգային հանրությանը ներկայացնելու նպատակով: Կանոնավոր փոխանակումն ապահովելու նպատակով Ծրագիրը հրավիրելու է «Ինլայտեն» նախաձեռնության ներկայացուցիչներին իր Խորհրդի նիստերին համագործակցության մանրամասները քննարկելու և տարեկան աշխատանքային պլանում ներառելու համար:

Եվրամիության նոր անդամ երկրների հետ, ինչպիսիք են՝ Չեխիայի և Սլովակիայի հանրապետությունները, համագործակցային կապեր են հաստատվելու (համապատասխան կառավարությունների համաֆինանսավորմամբ) այդ երկրների տեխնիկական կանոնակարգերը, նորմերը և ստանդարտները ԵՄ պահանջներին մոտարկման գործնական փորձին ծանոթանալու համար:

III. ԾՐԱԳՐԻ ԱՐՅՈՒՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ

<p>Ծրագիրն օժանդակելու է հասնել Հայաստանում հետևյալ արդյունքներին, որոնք սահմանվում են ՀԾ կամ ՀԾԳՊ-ում</p> <p>4.1.5 Շրջակա միջավայրի համար անվնաս, էներգաարդյունավետ տեխնոլոգիաների և ավելի մաքուր արտադրության համար մշակված և իրականացված նորարարական քաղաքականություններ և գործառնություններ:</p>					
<p>Հայաստանի ծրագրի արդյունքների ցուցանիշները</p> <p>1. Էներգաարդյունավետությանը նպաստող ընդունված օրենքների և իրավական ակտերի քանակը; 2. Էներգաարդյունավետության զարգացման և իրականացման նպատակով մշակված և իրականացված նախաձեռնությունների քանակը; 3. Բնապահպանական վիճակի վարկանշման և մակնշման ներդրված գործառնությունների քանակը:</p>					
<p>Առաջնային կիրառելի առանցք Շրջակա միջավայր և կայուն զարգացում Առանցքային արդյունքի ոլորտը (տույն է, ինչ տիտղոսաթերթի վրա, նշել դրանցից մեկը). Շրջակա միջավայրի և էներգետիկայի խնդիրների լուծման առաջնայինությունների մեջ ներառում</p>					
<p>Կիրառելի ԳԷՖ ռազմավարական նպատակը և ծրագիրը. Կլիմայի փոփոխության մեղմում-2</p>					
<p>Կիրառելի ԳԷՖ ակնկալվող արդյունքը. 2.1.Ընդունված և կիրառության մեջ է դրված համապատասխան քաղաքականություն, իրավական և կարգավորող դաշտ; 2.2 Կայուն ֆինանսավորման և առաքման մեխանիզմները ստեղծվել և գործում են:</p>					
<p>Կիրառելի ԳԷՖ արդյունքի ցուցանիշները. ԷԱ լուսավորության աջակցության համար քաղաքականության ընդունում և ֆինանսավորման մոբիլիզացում</p>					
	Ցուցանիշ	Բազային	Նպատակներ Ծրագրի ավարտ	Ապացույցներ	Ռիսկեր և ենթադրություններ
<p>Ծրագրի նպատակը</p> <p>Վերացնել Հայաստանում էներգաարդյունավետ լուսավորության խոչընդոտները՝ տեխնիկական աջակցության, ֆինանսավորման դյուրացման և քաղաքային ծրագրերի և ազգային քաղաքականության մշակման և իրականացման միջոցով:</p>	<p>Խնայված էներգիայի քանակը և ՋԳ արտանետման կրճատումը</p>	<p>Փողոցային լուսավորության համար 2011թ. սպառվել է 40 ԳՎտ ժամ էլեկտրա-էներգիա, որից արտանետված CO₂-ի քանակը կազմել է 16 000 տոննա, բնակարանային լուսավորությունը 2011թ. սպառել է 550 ԳՎտ ժամ, որից արտանետված CO₂-ի քանակը կազմել է 220 000 տոննա</p>	<p>Ցուցադրական ծրագրերից առաջացած էներգիայի ուղղակի խնայողությունը՝ տարեկան 1,4 ԳՎտ ժամ (560 տոննա արտանետված CO₂)</p> <p>Էներգիայի անուղղակի խնայողություն՝ տարեկան 20 ԳՎտ ժամ, որը ստացվելու է քաղաքային ծրագրերից՝ ցուցադրական ծրագրերի կրկնօրինակման միջոցով (8000 տոննա արտանետված CO₂)</p> <p>Էներգիայի անուղղակի խնայողություն՝ տարեկան 125 ԳՎտ ժամ, որը ստացվելու է լուսավորության ազգային քաղաքականության կիրառումից (50000 տոննա արտանետված CO₂)</p>	<p>Էներգիայի ուղղակի խնայողություն և խնայողություն քաղաքային ծրագրերից. հաշվիչի ցուցմունքի գրանցում և էլ.ընկերության կողմից հաշվի դուրսգրում</p> <p>Խնայողություն՝ ազգային քաղաքականության կիրառումից. հաշվարկները՝ ըստ կարգավորող պահանջների, տվյալները՝ ազգային գործակալություններից, և մատակարարողները՝ ըստ ներմուծման և այլ շուկայական ցուցանիշների</p>	<p>Այս նպատակների իրականացումը կախված է քաղաքային ծրագրերի և ազգային քաղաքականության ընդունմից և ճիշտ ժամանակին իրագործումից, որն, իր հերթին, բավարար քաղաքական կամք և ֆինանսավորում է պահանջում</p>

	Ցուցանիշ	Բազային	Նպատակներ Շրագրի ավարտ	Ապացույցներ	Ռիսկեր և ենթադրություններ
Արդյունք 1 Քաղաքային էներգափորձաքննու- թյուն և տեխնիկական կարողությունների հզորացում	Կատարված քաղաքային էներգափորձաքննու- թյունների քանակը. Վերապատրաստված մասնագետների և կազմակերպություն- ների ներկայացու- ցիչների քանակը	Հայաստանում, հանրային լուսա- վորություն ուղղորտում համակողմանի էներգափորձա- քննությունները սովորաբար չեն անցկացվում Հայաստանում էՍ լուսավորության մասնագիտացված ուսուցում չի իրականացվում	Երևանում և այլ քաղաքներում անցկացվել է հանրային լուսավո- րության առնվազն 10 համակող- մանի փորձաքննություն ԷՍ լուսավորության դասընթացներ են անցկացվել մասնագետների և կազմակերպությունների ներ- կայացուցիչների համար Երևանում և առնվազն 10 այլ քաղաքներում	Էներգափորձաքննության մասին լրացված փաստա- թղթեր Ուսումնական նյութեր, մասնակիցների ցանկեր, կատարված աշխատանք- ների ամփոփագրեր	
Արդյունք 2 Ցուցադրական ծրագրեր. <i>Փորձնական ծրագրերը հանգեցնում են շահավետ էներգախնայողության, բարձրացնում են էՍ նկատմամբ ներդրողների և որոշում կայացնողների վստահությունը և կարողությունը</i>	Տեղադրված էՍ լուսավորության արդյունավետությունը և էներգիայի խնայողությունը Լուսադիոդների բաժինը ցուցադրական ծրագրերում	Առկա լուսավորության ձևերի տարբեր մակարդակներ. Ելակետային տեխնոլոգիաները բաղկացած են հին 250Վտ ԲՃՆ լամպերից, 400Վտ սնդիկային լամպերից, ՇԼ-երից և ցերեկային լույսի խողովակներից (մեկնարկային փուլի ընթացքում Ելակետային տվյալները կյարմացվեն)	Իրականացվել են տարբեր տեխնո- լոգիաներին առնչվող, ներառյալ` ԼԴԼ-եր, և տարբեր կիրառումներով, ներառյալ` փողոցային լուսավորությունը և շենքերը, առնվազն հինգ ցուցադրական ծրագրեր Էներգիայի ուղղակի խնայողությունը կազմել է տարեկան 1,4 ԳՎտ ժամ 100 % լուսադիոդներ լուսավորության արտաքին և ներքին նոր համակարգերի դեպքում 5 % լուսադիոդներ լուսավորության արտաքին վերանորոգված համա- կարգերի դեպքում	Դաշտային ստուգումներ, հաշվիչների ցուցմունք- ներ, և այլ փաստաթղթեր	Այս նպատակի իրա- կանացումը կախված կլիմայի պլանավորումից, ֆինանսավորումից և իրականացումից` ըստ ծրագրի և իր գործըն- կերների կողմից համաձայնեցված ճշգրիտ ժամանացույցի

	Ցուցանիշ	Բազային	Նպատակներ Ծրագրի ավարտ	Ապացույցներ	Ռիսկեր և ենթադրություններ
<p>Արդյունք 3 Ընդօրինակում՝ քաղաքային լուսավորության և դրան առնչվող ֆինանսական գործիքների միջոցով. <i>Քաղաքային լուսավորության ծրագրերը հանգեցնում են ԷԱ լուսավորության լայն կիրառմանը և էներգիայի համապատասխան խնայողությանը</i></p>	<p>Հանրային ԷԱ լուսավորության քաղաքային ծրագրերի ընդունում և ֆինանսավորում</p> <p>Այս ծրագրերից ստացված եներգիայի խնայողությունը</p> <p>Քաղաքային եներգաարդյունավետ լուսավորության համար ֆինանսական պարտավորությունները</p>	<p>Հանրային ԷԱ լուսավորության քաղաքային ծրագրերը ցանկալի են, սակայն բազմակողմանիորեն նախագծված, ֆինանսավորված, կամ իրականացված չեն</p>	<p>Երևանի քաղաքապետարանը ֆինանսավորմամբ ապահովված քաղաքային լուսավորության արդիականացման ծրագրեր է մշակում և ընդունում</p> <p>Նմանօրինակ ծրագրեր ընդունվել են Հայաստանի առնվազն հինգ այլ քաղաքներում</p> <p>Քաղաքային լուսավորության ծրագրերից ստացված խնայողությունը՝ տարեկան 20 ԳՎտ ժամ</p> <p>Էներգաարդյունավետ քաղաքային լուսավորության համար ապահովվել է 10 մլն ԱՄՆ դոլար</p>	<p>Ծրագրերի ընդունման և ֆինանսավորման համաձայնագրերի պաշտոնական փաստաթղթեր</p>	<p>Քաղաքային ծրագրերի ընդունման համար անհրաժեշտ են բավականին միջոցներ քաղաքային բյուջեներից և/կամ ֆինանսավորման պետական և մասնավոր աղբյուրներից</p>
<p>Արդյունք 4 Լուսավորության ազգային քաղաքականություններ, նորմեր և ստանդարտներ <i>Նոր ազգային քաղաքականությունները նախատեսում են զգալիորեն ավելի մեծ էներգաարդյունավետություն և ապահովում են լուսավորության արտադրանքի որակը, մասնավորապես՝ բնակելի շենքերում</i></p>	<p>Սովորական ՇԼ-երի փուլային վերացման պահանջը ընդունել և ուժի մեջ մտցնել</p> <p>Ընդունել և իրականացնել այլ անհրաժեշտ քաղաքականություններ տարբեր ոլորտներում ԷԱ լուսավորության խրախուսման նպատակով, որոնցից են՝ նորմերը, ստանդարտները և գնումների կանոնները</p>	<p>Սովորական ՇԼ-երը վաճառվում են առանց սահմանափակման և կազմում են Հայաստանի բնակելի շենքերի լուսավորության 85 տոկոսը</p>	<p>Ընդունվել և աժի մեջ է մտել սովորական ՇԼ-երի փուլային վերացման ազգային օրենսդրություն</p> <p>Առնվազն 25 տոկոսով ավելի արդյունավետ լուսատվությամբ լամպերը փոխարինել են սովորական ՇԼ-երին՝ ըստ փուլային վերացման ընդունված ժամանակացույցի</p> <p>Փուլային վերացմանն աջակցող այլ ընդունված քաղաքականություններ և ստանդարտներ</p>	<p>Ընդունված օրենքների, ստանդարտների կամ այլ պետական քաղաքականության և կանոնակարգերի պաշտոնական փաստաթղթեր</p>	<p>Ազգային քաղաքականության ընդունման համար անհրաժեշտ է բավարար քաղաքական կամք և սպառողների լուսավորության որակի, արժեքի, սնդիկի պահեստավորման վերաբերյալ շահագրգիռներին մտահոգող խնդիրների լուծում</p>

IV. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՅՈՒՋԵՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ **fl** **£**

Օրագրի ՆՀ	00074869	Արդյունքի ՆՀ	00087057
Հատկացման անվանումը	Հայաստան - Քաղաքային կանաչ լուսավորություն		
Գործառնական միավոր:	ARM10		
Օրագրի անվանումը	Հայաստան - Քաղաքային կանաչ լուսավորություն		
Օրագրի ՄԱԶԾ համարը (PIMS)	4669		
Իրականացնող գործընկեր (Կատարող մարմին)	Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն		

Միջոցների ամփոփ ցանկ ⁴

	Գումարը, ԱՄՆ դոլար Տարի 1	Գումարը, ԱՄՆ դոլար Տարի 2	Գումարը, ԱՄՆ դոլար Տարի 3	Գումարը, ԱՄՆ դոլար Տարի 4	ԸՆԴՀԱՄԵՆԸ, ԱՄՆ դոլար
ԳԷՖ	297,000	678,000	433,000	192,000	1,600,000
ՄԱԶԾ	15,000	42,000	16,000	47,000	120,000
Կառավարություն (կանխիկով և բնեղեն)	2,130,000	3,210,000	1,980,000	1,055,000	8,470,000
ԸՆԴՀԱՄԵՆԸ	2,442,000	3,930,000	2,429,000	1,294,000	10,190,000

⁴ Ամփոփ աղյուսակում ներկայացվելու է ամբողջ ֆինանսավորման բոլոր տեսակները. ԳԷՖ ֆինանսավորումը, համաֆինանսավորումը, կանխիկով, ապրանքով, և այլն:

Բյուջետային ծանոթագրություն

Ծախսերի ընդհանուր գործոնները.

- Կարճաժամկետ տեղական խորհրդատուների (ՏԽ) համար նախատեսված բյուջեն կազմում է՝ շաբաթական 300 ԱՄՆ դոլար:
- Միջազգային խորհրդատուների (ՄԽ) համար նախատեսված բյուջեն կազմում է՝ շաբաթական 3.000 ԱՄՆ դոլար,
- Օրապահիկի համար նախատեսված բյուջեն կազմում է՝ օրական 185 ԱՄՆ դոլար,
- Միջազգային ավիատոմսերի համար նախատեսված բյուջեն կազմում 1.000 ԱՄՆ դոլար՝ յուրաքանչյուր երկողմանի թռիչքի համար,
- Մյուս ծախսերը կատարվում են ըստ ՄԱԶԾ ծախսերի ընդունված կարգի: Ծրագիրը ձգտելու է հնարավորին չափ խնայել ծախսերը՝ օգտագործելով մինչ այժմ Կլիմայի փոփոխության ծրագրում կիրառվող ծրագրային մոտեցման սկզբունքը, որը, մասնավորապես, վերաբերում է սարքավորումների գնմանը և սպասարկմանը, տեղեկատվական տեխնոլոգիաներին և նյութատեխնիկական ապահովմանն առնչվող տեխնիկական օգնությանը, ինչպես նաև հաղորդակցության/կապի ծախսերին և տրանսպորտային միջոցների համատեղ օգտագործմանը.

Արդյունք 1:

1. Էներգափորձաքննության պլանավորման և իրականացման ամբողջ ընթացքում Ծրագրի կառավարման թիմին և տեղական խորհրդատուին տարածաշրջանում առկա լավագույն փորձի և արդեն փորձված մեթոդաբանության հիման վրա առաջնորդելու համար վարձվելու են միջազգային կարճաժամկետ խորհրդատուներ: ՄԽ-ն քաղաքային լուսավորության ընկերությունների անձնակազմի համար էներգափորձաքննության և էներգիայի սպառման նվազեցման պոտենցիալի գնահատման և շահագործման և սպասարկման ծախսերի օպտիմալացման թեմաներով վերապատրաստման դասընթացներ է պլանավորելու և անցկացվելու:
2. Վարձվելու է տեղական կարճաժամկետ խորհրդատու, ով օգնելու է ՄԽ-ին էներգափորձաքննության պլանավորման և ուղղորդման, վերապատրաստման դասընթացների և ճանաչողական այցերի պլանավորման, երկրի վերաբերյալ գիտելիքների և հեռանկարների տրամադրման նպատակով:
3. Փորձագիտական թիմին և մասնագիտական ծառայություններ մատուցողներին կառավարման և տեխնիկական անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու նպատակով Առաջադրանքի ղեկավար/փորձագետ (ժամանակը համատեղելու է տարբեր Արդյունքների միջև) է վարձվելու:
4. Ճամփորդական ծախսերը ներառում են օրապահիկը և միջազգային թռիչքները՝ միջազգային խորհրդատուների համար, ինչպես նաև ծրագրի երկրորդ տարվա ընթացքում՝ քաղաքապետարանի տեղական մասնագետների համար կազմակերպվող ճանաչողական այցերը:
5. Դրանք ներառում են տեղական և միջազգային ընկերությունների հետ ենթակապալային պայմանագիրը՝ Երևանի քաղաքային լուսավորության համակարգի էներգափորձաքննությունը կազմակերպելու նպատակով, այդ թվում՝ տվյալների հավաքագրումը, վերլուծությունը և առաջարկությունները, ինչպես նաև քաղաքային լուսավորության ընկերության աշխատակիցների համար կիրառվող էներգափորձաքննության մեթոդաբանության վերաբերյալ՝ աշխատանքի ուսուցումը:
6. Ինտերնետային կապի, դաշտային հեռախոսակապի վարձը և փոստային առաքումների ծախսերը:

7. Թարգմանություն, տպագրություն և տեխնիկական հաշվետվությունների և փաստաթղթերի վերարտադրությունը:

Արդյունք 2:

8. Վարձվելու է տեղական խորհրդատու, ով գնահատելու է փորձնական ծրագրերի համապատասխանությունը փորձաքննությունից ստացված առաջարկություններին (Միջոցառում 1.1 հետ՝ համագործակցությամբ) և վերահսկելու է իրականացման ընթացքը:
9. Տեղական խորհրդատուների ծախսերը փոխհատուցվելու են Ճամփորդական ծախսերի միջոցով:
10. Լուսավորության էներգաարդյունավետության ցուցադրական ծրագրերի նախագծման և իրականացման համար վարձվելու են տեղական ընկերություններ:
11. Լուսատեխնիկական սարքերի, լամպերի և կարգավորման վահանակների գնմանն առնչվող ծախսերը կատարվելու են ցուցադրական ծրագրերի հետ միասին:

Արդյունք 3:

12. Միջազգային կարճաժամկետ խորհրդատուներ են վարձվելու, ովքեր միջազգային լավագույն փորձի հիման վրա առաջնորդելու են Ծրագրի կառավարման թիմի կողմից քաղաքային լուսավորության արդիականացումը (այդ թվում՝ տեխնիկական) պլանավորելու ու զարգացնելու աշխատանքները, և հանրային լուսավորության համաքաղաքային պլանավորման միջոցառումների և իրականացման ժամանակացույցը:
13. Միջազգային խորհրդատուների առաջնորդությամբ տեղական խորհրդատուները նպաստելու են քաղաքապետարանների հետ բանակցությունների ընթացքին և տվյալների, այդ թվում՝ քաղաքային զարգացման պլանների մասին, հավաքագրմանը և արդյունքների հանրային իրազեկման ռազմավարության իրականացմանը:
14. Տեղեկատվական տեխնոլոգիաների տեղական մասնագետներ են վարձվելու, ովքեր ապահովելու են մոդելավորման աշխատանքները, ծրագրային միջոցները, կայքի ձևավորումը և կայի լոկալ ցանցերի նորոգումը և սպասարկումը:
15. Միջազգային խորհրդատուների միջազգային ճամփորդություն ծախսերը և տեղական խորհրդատուների երկրի ներսում ճամփորդություն ծախսերը փոխհատուցվելու են Ճամփորդական ծախսերի միջոցով:
16. Դրանք ներառում են համաքաղաքային համապարփակ լուսավորության համակարգի պլանավորման փաստաթղթի մշակման համար միջազգային ընկերության հետ ենթակապալային պայմանագիրը՝ իրականացման համար ֆինանսավորման միջոցներ ներգրավելու նպատակով: Հաշվի առնելով տեղական առանձնահատկությունները՝ նմանօրինակ սխեմաները Հայաստանի այլ քաղաքներում հարմարեցնելու նպատակով տեղական ընկերություն է վարձվելու:
17. Գրասենյակային կահույքի և փոխադրամիջոցի գնում՝ երկրում դաշտային այցերի համար:
18. Ինտերնետային կայքի, դաշտային հեռախոսակապի վարձը և փոստային առաքումների ծախսերը:
19. Այդ թվում՝ վերապատրաստման դասընթացների կազմակերպման համար սարքավորումների գնում:
20. Ժողովների, դասընթացների, աշխատաժողովների կազմակերպման հետ կապված ծախսեր:
21. Գրասենյակային կահույքի և ավտոմեքենայի վերանորոգման հետ կապված ծախսեր:
22. Զեկույցների/հաշվետվությունների թարգմանության, խմբագրման և հրատարակման հետ կապված ծախսեր:

Արդյունք 4:

23. Միջազգային կարճաժամկետ խորհրդատուն կառաջնորդի ազգային խորհրդատուներին և Ծրագրի կառավարման թիմին ազգային օրենսդրության/կանոնակարգերի վերանայման հիմնական ուղղություններում, որը կատարվելու է միջազգային լավագույն կիրառելի փորձի և լուսատեխնիկական արտադրանքի արդյունավետության, որակի և սնդիկի պարունակության, ինչպես նաև ՇԼ-երի փուլային դուրս մղման և սնդիկ պարունակող լուսատեխնիկական արտադրանքի հեռացման ԵՄ ստանդարտների գնահատման հիման վրա: ՄԽ-ն կաջակցի Ծրագրի կառավարման թիմին և տեղացի մասնագետներին մշակել գործընկեր փորձարկման լաբորատորիաների համար հիմնական սարքավորումների տեխնիկական բնութագրերը:
24. Տեղական խորհրդատուները ներգրավվելու են հետևյալ առաջարկությունների մշակման գործընթացներում. i) ՇԼ-երի փուլային դուրս մղման վերաբերյալ, ii) սպառված և կոտրված սնդիկ պարունակող լամպերի հեռացման ինտիտուցիոնալ մեխանիզմի վերաբերյալ, iii) փորձարկման լաբորատորիաների, սերտիֆիկացման և վերահսկող մարմինների կարողությունների հզորացման համար: Տեղական խորհրդատուները ապահովելու են շինարարական նորմերի և առողջապահական ստանդարտների էներգաարդյունավետ լուսատեխնիկական արտադրանքը խրախուսող և լուսատեխնիկական արտադրանքի շահագործման ժամկետի արժեքի և նվազագույն ցուցանիշների ստանդարտների հիման վրա պետական գնումների կանոնների փոփոխությունների նախագծի մշակումը:
25. Հանրային կապերի և տեղեկատվության գծով օգնականը, ազգային և միջազգային փորձագետների հետ սերտ համագործակցությամբ, պատասխանատու կլինի հանրային իրազեկման/տեղեկատվական նյութերի, տեխնիկական հաշվետվությունների, այդ թվում՝ ուսումնական փաթեթների, տվյալների աղյուսակների հավաքագրման, կազմելու, և խմբագրման համար: Օգնականը պատասխանատու կլինի ծրագրի նյութերի և տարածաշրջանային վեբ-կայքերի (www.nature-ic.am, www.beeca.net) պարբերական թարմացման և նախագծերի պատրաստման համար:
26. Դրանք ներառում են արդիական լուսատեխնիկական արտադրանքի, փորձարկման, սերտիֆիկացման և համապատասխանության տեխնիկական ստանդարտների և փաստաթղթերի մշակման հետ կապված ծառայությունները: Երրորդ տարվա ընթացքում էներգաարդյունավետ լուսավորության պետական գնումների կանոնների մշակման և պետական մարմինների վերապատրաստման նպատակով մի կապալառու կընտրվի:
27. Սարքավորումների մեջ ներառվում են լուսատեխնիկական արտադրանքի փորձարկման սարքավորումները և հիմնական լաբորատոր սարքավորումները:
28. Տեղեկատվական տեխնոլոգիաների գույքի ձեռքբերում:
29. Օրենսդրական փաստաթղթերի նախագծերի, խրախուսական և գովազդային նյութերի թարգմանության, խմբագրման և տպագրության ծախսեր:

Ծրագրի կառավարման մարմինը

30. Ծրագրի միջնաժամկետ և ավարտական անկախ գնահատում, նաև Ծրագրի մեկնարկային հաշվետվության պատրաստման համար միջազգային խորհրդատու:
31. Ծրագրի կառավարիչ (աշխատավարձի 50%-ը)
32. Ծրագրի ֆինանսական աուդիտ
33. Ծրագրի կառավարիչ (աշխատավարձի 50%-ը) և կես դրուքով ֆինանսական և վարչական գծով օգնական
34. Ծրագրի ուղղակի ծախսերի մանրամասներն ու հաշվարկը ներկայացրած են անգլերեն տարբերակի Հավելված F-ում:

V. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ծրագիրն իրականացնելու է ՀՀ բնապահպանության նախարարությունը (ԲՊՆ)՝ հետևելով ՄԱԶԾ Ազգային իրականացման ձևաչափին (ԱԻՁ): ԲՊՆ-ը՝ որպես Հայաստանում ՄԱԿ ԿՓՇԿ իրականացման ազգային լիազորված մարմին, 1997թ-ից ի վեր համակարգում է ՄԱԶԾ-ԳԷՖ կլիմայի փոփոխության ծրագիրը և պատասխանատու կլիմայի ծրագրի ընդհանուր կառավարման և վերահսկողության համար՝ ապահովելով երկրում ՋԳ նվազեցմանն ուղղված այլ քաղաքականությունների և միջոցառումների հետ փոխգործակցությունը, ինչպիսիք են, օրինակ՝ վերոնշյալ ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագրերը: ԲՊՆ-ը կարողություններ և գիտելիքներ ունի առաջնորդելու և վերահսկելու ծրագրի իրականացման հայեցակարգային մասը, ներառյալ՝ կլիմայի փոփոխության մեղմման նպատակներին հասնելու համար մասնագիտական կառավարումը և ՋԳ արտանետումների նվազեցման ազդեցության նկատմամբ հսկողությունը՝ սնդիկի վերամշակմանն առումով, ինչպես նաև համակողմանի աջակցություն տրամադրելու՝ Ծրագրի տեխնիկական Խորհրդատվական կոմիտեի և Ծրագրի Խորհրդի միջոցով:

ԲՊՆ-ը եղել է շենքերի կենտրոնացված ջեռուցման էներգաարդյունավետության ՄԱԶԾ-ԳԷՖ լիաձավալ ծրագրերի իրականացնող մարմինը և հաջող իրականացման և տարբեր նախարարությունների և շահագրգիռների հետ համագործակցության աշխատանքային լավ փորձ ունի:

Երևանի քաղաքապետարանը հիմնական շահառուն և իրականացնող գործընկերն է լինելու: Էներգաարդյունավետ լուսավորություն ծրագրերը և իրականացման ձևաչափը մշակվելու են այլ քաղաքների քաղաքապետարանների հետ սերտ համագործակցությամբ: ԷԱ լուսավորության համակարգի զարգացման համապատասխան օրենսդրարական դաշտը մշակվելու է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և Քաղաքաշինության նախարարության հետ սերտ համագործակցությամբ: Այս և այլ շահագրգիռ կողմերի, ինչպես նաև ծրագրի շահառուների ցանկը ներակայացված է ստորև՝ Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Ծրագրի գործընկերները, դերակատարությունը և համագործակցության ոլորտները⁵

Գործընկեր	Համատեղ և փոխլրացնող միջոցառումներ
Բնապահպանության նախարարություն	<ul style="list-style-type: none"> • Ծրագրի իրականացման համակարգում և վերահսկում՝ ըստ ՄԱԶԾ և ԳԷՖ ընթացակարգերի • Ծրագրի (ցուցադրական ծրագրերը ներառյալ) ՋԳ մեղմման պոտենցիալի գնահատում և դրա հետագա կրկնօրինակում • Հնացած լուսատեխնիկական սարքերի էկոլոգիապես անվտանգ հավաքման և հեռացման կանոնակարգերի մշակում և ընդունում

⁵ Ծրագիրը գնահատել է ազգային էլեկտրական ցանցի՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» բաժնետիրական ընկերության, հետ աշխատելու պոտենցիալը: Էներգաարդյունավետ լուսավորության օրենսդրական պարտադիր պահանջների դեռևս բասակայության պատճառով և, քանի որ, ընկերության եկամուտը ուղղակիորեն կապված է վաճառվող էլեկտրաէներգիայի ծավալից, ներկայումս պահանջարկիկողմի կառավարման առումով ցանցային ընկերության հետ ընդհանուր շահեր և փոխգործակցություն պլանավորելը իրատեսական չէ:

Գործընկեր	Համատեղ և փոխընդհանուր միջոցառումներ
Երևանի քաղաքապետարան	<ul style="list-style-type: none"> • Ընտրված ոլորտների էներգափորձաքննություն՝ ելակետային իրավիճակի և արդիականացման պոտենցիալի գնահատման նպատակով (մասամբ աջակցելու է Ավստրիական բանկը՝ տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակներում): Համակարգի տեխնիկական վիճակի գնահատում և առավելագույն նվազեցման պոտենցիալով էներգաարդյունավետության միջոցառումների բացահայտման օպտիմալացման հնարավորություններ: • Երևանի հանրային լուսավորության ցուցադրական ծրագրերի նախագծում, իրականացում և մոնիտորինգ: • Քաղաքային ցանցերի ամբողջական արդիականացման քաղաքային պլանների և ֆինանսավորման գործիքների նախագծում և իրականացում: • Երևանի լուսավորության ընկերության անձնակազմի վերապատրաստում:
Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	<ul style="list-style-type: none"> • Սովորական ՇԼ-երի փուլային դուրս մղման տեխնիկական վերլուծություն, արդարացում, քաղաքականության մշակում և պայմանների ընդունում: • Լուսատեխնիկական արտադրանքի տեխնիկական ստանդարտների մշակման, այդ թվում՝ ԵՄ համապատասխան ստանդարտների հետ ներդաշնակեցման նկատմամբ հսկողություն: • ԷԱ լուսատուների գնումների կանոնների մշակում:
Քաղաքաշինության նախարարություն	<ul style="list-style-type: none"> • Արհեստական և բնական լուսավորության շինարարական նորմերի դիտարկում և վերանայում:
Ստանդարտացման ազգային ինստիտուտ	<ul style="list-style-type: none"> • Լուսատեխնիկական արտադրանքի տեխնիկական ստանդարտների մշակում:
Հայաստանի պետական ճարտարագիտական Համալսարան	<ul style="list-style-type: none"> • Լուսատեխնիկական արտադրանքի փորձարկում և սերտիֆիկացում՝ ըստ տեխնիկական ստանդարտների: • Կրթական, վերապատրաստման և իրազեկվածության բարձրացման միջոցառումներ:
Հայաստանի Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ	<ul style="list-style-type: none"> • Կրթական, վերապատրաստման և իրազեկվածության բարձրացման միջոցառումներ:

Արտաքին ղեկավարությունը և վերահսկողությունն իրականացվելու է երկու առանձին, սակայն սերտորեն փոխկապակցված, մարմինների կողմից:

Ծրագրի խորհուրդը կազմված կլինի ՄԱԶԾ բնապահպանական ծրագրերի գծով ազգային տնօրենից, կառավարության և իրականացնող գործընկերոջ ներկայացուցչից՝ ՀՀ բնապահպանության նախարարությունից, Երևանի քաղաքապետարանի՝ որպես ծրագրի հիմնական շահառուի և երկրորդ իրականացնող գործընկերոջ, կողմից առաջադրված մի ներկայացուցչից և ՄԱԶԾ ավագ ներկայացուցչից: Ծրագրի խորհուրդը կառավարման փոխհամաձայնեցված որոշումներ է կայացնելու, երբ Ծրագրի կառավարչի մոտ այդպիսի պահանջ առաջանա: Ծրագրի խորհուրդը կունենա նաև վերջնական որոշում կայացնելու լիազորություններ այսպիսի հարցերում, որոնք ենթակա են պաշտոնական քննարկմանը և հաստատմանը, այդ թվում՝

տարեկան աշխատանքային պլանները, բյուջեները և հիմնական աշխատուժի և գույքի վարձակալումը:

Տեխնիկական Խորհրդատվական կոմիտեն կազմված կլինի տարբեր այլ շահագրգիռ պետական և մասնավոր կազմակարպություններից: Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը, Քաղաքաշինության նախարարությունը, Տարածքային կառավարման նախարարությունը, Էկոնոմիկայի նախարարությունը, Բնապահպանության նախարարությունը, ՀՎԷԷՀ, Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտը, ՀՀ Ստանդարտների ազգային ինստիտուտը և Երևանի ճարտարապետություն և շինարարություն պետական համալսարանը կիրավիրվեն Տեխնիկական խորհրդատվական կոմիտեում իրենց ներկայացուցիչներին առաջադրելու համար: Այս խումբը ամեն տարի ժողովներ կգումարի և, անհրաժեշտության դեպքում, տարվա ընթացքում պարբերական խորհրդակցություններ կանցկացնի: Ծրագրի խորհուրդը ակտիվորեն կխորհրդակցի և հաշվի կառնի տեխնիկական Խորհրդատվական կոմիտեի առաջարկությունները: Ծրագրի խորհրդի նիստերը, հնարավորության դեպքում, կգումարվեն Տեխնիկական խորհրդատվական կոմիտեի տարեկան ժողովներից անմիջապես հետո:

Այս ծրագրի համար ՄԱԶԾ-ը կգործի որպես ԳԷՖ-ի Գործակալություն: Ծրագիրը կառուցվելու է Հայաստանում և Արևելյան Եվրոպայում և ԱՊՀ երկրներում ՄԱԶԾ-ի ձեռք բերած փորձի հիման վրա, և խրախուսելու է էներգաարդյունավետությունը, շրջակա միջավայրի պահպանությունը և հզորացնելու է պետական կազմակերպությունների և հանրության կարողությունները: ՄԱԶԾ-ի կողմից Հայաստանում վերջերս իրականացված ծրագրերը վերաբերում են տարբեր բնագավառներին, որոնցից են՝ շենքերի էներգաարդյունավետությունը, քաղաքային ջեռուցման էներգաարդյունավետությունը, երկրի ջերմոցային գույքագրման մշակումը և ՄԱԿ ԿՓՇԿ-ի համար ազգային զեկույցների նախապատրաստումը, ժողովրդավարական կառավարման աջակցությունը և, մասնավորապես, տեղական ինքնակառավարման մարմինների ապակենտրոնացման և կարողությունների հզորացման աջակցությունը: ՄԱԶԾ-ը նաև մի քանի տարի «Գեդեցիկ Երևան» ծրագրի շրջանակներում արդյունավետորեն համագործակցել է Երևանի քաղաքապետարանի հետ: Ավելին, Ռուսաստանում, Ուկրաինայում և Ղազախստանում ՄԱԶԾ-ն արդեն սկսել է իրականացնել նմանատիպ ծրագրին շատ նման էներգաարդյունավետ լուսավորություն ծրագրեր՝ փոխգործակցության և փոխադարձ աջակցության բարձր ներուժով, որը գործադրվելու է ՄԱԶԾ Բրատիսլավայի տարածաշրջանային կենտրոնի միջոցով:

Հայաստանում ՄԱԶԾ-ի գրասենյակը պատասխանելու է թափանցիկության, համապատասխան վարքագծի և ֆինանսական պարտավորությունների ապահովման համար: Այս գրասենյակը վերահսկելու է տարեկան ֆինանսական ստուգումները, ինչպես նաև ծրագրի կատարողականի միջնաժամկետ և ավարտական անկախ գնահատման գործընթացը: Բոլոր ֆինանսական գործարքները և համաձայնագրերը, այդ թվում՝ անձնակազմի և խորհրդատուների հետ կնքված պայմանագրերը, պետք է համապատասխանեն Միացյալ ազգերի կազմակերպության կանոններին ու ընթացակարգերին: ՄԱԶԾ տարածաշրջանային համակարգող գրասենյակը ապահովելու է նաև ծրագրային և վարչական կանոնավոր վերահսկողությունը:

Ծրագրի ամենօրյա կատարումը իրականացվելու է ՄԱԶԾ Կլիմայի փոփոխության ծրագրի արդեն հիմնադրված գրասենյակի կողմից, որը համակարգվելու է ԲՊՆ-ի կողմից և, որը տեղակայված է նույն նախարարության տարածքում (գրասենյակային տարածքը, կապի միջոցները և այլ կոմունալ հարմարությունները կառավարության ներդրումային մասնաբաժինն է՝ ապրանքային տեսքով): Ծրագրի կառավարման ենթադրվող կառուցվածքի պատկերը տես՝ Գծանակար 1:

Ծրագրի շրջանակներում Առաջադրանքի ղեկավարի (ԱՂ) լրիվ դրույքով աշխատող տեխնիկական փորձագետ է վարձվելու, ով կառավարման և տեխնիկական բնայթի անհրաժեշտ աջակցություն է մատուցելու Կլիմայի փոփոխության ծրագրի համակարգողին: ԱՂ-ը ամբողջությամբ պատասխանատու է ծրագրի ճիշտ իրականացման և ծրագրի բոլոր միջոցառումների համակարգման համար: Նրան իրավունք է վերապահվում համապատասխան պլանավորված գործունեություններ իրականացնել՝ ըստ Ծրագրի կոմիտեի կողմից հաստատված տարեկան աշխատանքային պլանի: Ծրագրի իրականացման համար մրցութային հիմունքներով հավաքագրվելու է Ծրագրի թիմ: Ծրագրի թիմն աշխատելու է ԱՂ-ի գլխավորությամբ, ով պլանավորման, իրականացման որակի, իրականացվող միջոցառումների ժամկետների պահպանման և արդյունավետության, միջոցների պատշաճ օգտագործման վերաբերյալ հաշվետու կլինի Ծրագրի համակարգողին և ՄԱԶԾ-ին: ԱՂ-ի հավաքագրումը կիրականացվի Ազգային կատարող մարմնի և ՄԱԶԾ-ի հետ համատեղ՝ համաձայն ՄԱԶԾ ընթացակարգերի: Ծրագրով նախատեսվող միջոցառումների հաջող իրականացման համար նախընտրելի և օգտակար է հիմնվել արդեն կուտակված կարողություններից, այդ թվում՝ անձնակազմից, փորձից և տեղեկություններից, որոնք ստեղծվել, վերապատրաստվել և հզորացել են նախապատրաստական փուլի ընթացքում: Նման մոտեցումը կնպաստի ծրագրի սահուն մեկնարկին և իրականացմանը: Ծրագրի ընդհանուր կառավարման, այդ թվում՝ նյութատեխնիկական ապահովման, քննարկման փաստաթղթերի և հաշվետվությունների նախագծերի տարածման, ծրագրի գործունեության վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացման, խորհրդատուների աշխատանքի համակարգման և մոնիտորինգի և այլ անհրաժեշտ աջակցության նպատակով ԱՂ-ին օժանդակելու են միջազգային խորհրդատուները, ինչպես նաև աջակցության տեղական աշխատակազմը: Մեկնարկային փուլում ծրագիրն օգտվելու է միջազգային խորհրդատուի ծառայություններից: Անհրաժեշտության դեպքում, տարբեր տեխնիկական խնդիրների համար հրավիրվելու են նաև լրացուցիչ կարճաժամկետ տեղական և միջազգային փորձագետներ:

Ծրագրի կառավարման թիմը պատասխանատու է միջազգային և տեղական խորհրդատուների հավաքագրման համար, այդ թվում՝ թեկնածուների որոնման/ընտրության, տեխնիկական առաջադրանքների նախապատրաստման և վերահսկողության, ծրագրի համակարգման համար, ներառյալ՝ Ազգային իրականացնող մարմնի ժողովների կանոնավոր կազմակերպումը, ֆինանսական կառավարումը և հաշվետվողականությունը, վճարումների իրականացումը, ֆինանսական ծախսերի և հաշվետվությանների գծով աշխատակազմի վերապատրաստումը, ֆինանսական հաշվետվությունների ամբողջականության և ժամանակին կազմելու ապահովումը, տեխնիկական հաշվետվությունը, այդ թվում՝ կատարողականի մասին հաշվետվությունները, մոնիտորինգը և գնահատումը, վերապատրաստման դասընթացների և/կամ աշխատաժողովների կազմակերպումը և այլ առաջադրանքներ:

Ծրագրի աջակցության աշխատակազմը ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ծառայություններ է մատուցելու, կամ՝ ԱՂ-ի կողմից պահանջված ծառայություններ: Այդ ծառայությունները ներառում են ծրագրի հաշվետվությունները, ծրագրի մասին տեղեկատվության հավաքումը, նյութատեխնիկական ապահովումը և ֆինանսական հարցերը, գնումները, կամ աշխատանքի ընդունման և վարձակալման ընթացակարգերը:

Ծրագրի չորս բաղադրիչները համալրվելու են ոչ լրիվ դրույքով աշխատող տեղական փորձագետների և միջազգային փորձագետների միասին սերտորեն աշխատող թիմերով: Բաղադրիչ 1-ի իրականացման համար աշխատելու են քաղաքային լուսավորության էներգետիկայի, կամ էներգաարդյունավետության, կամ կանաչ լուսավորություն տեխնոլոգիաների ոլորտում փորձառու մասնագետներ և խորհրդատուներ: Միասին, նրանք քաղաքային լուսավորության


Էներգետիկայի վերաբերյալ տվյալներ են հավաքագրելու և վերլուծելու, ինչպես նաև մշտադիտարկելու են էներգետիկ վիճակի բարելավումները և էներգաարդյունավետ լուսավորության սոցիալական և բնապահպանական ազդեցությունները: Բացի այդ, նրանք մեթոդական օժանդակություն են ցուցաբերելու մայրաքաղաքում և այլ խոշոր քաղաքներում իրականացվող հանրային լուսավորության էներգափորձաքննությանը, ինչպես նաև քաղաքաշինարարների, ճարտարապետների և քաղաքային էներգետիկ համակարգի կառավարիչների համար կանաչ լուսավորության կիրառման վերաբերյալ ուղեցույցներ են մշակելու:

Բաղադրիչ 2-ի (քաղաքային կանաչ լուսավորություն փորձնական ծրագրեր) իրականացման համար աշխատող թիմը կազմված կլինի փողոցային լուսավորության տեխնոլոգիաների մասնագետներից, ովքեր մշտադիտարկելու են ազդեցությունը և հաղորդելու ու տարածելու են ծրագրի արդյունքները:

Բաղադրիչ 3-ի (քաղաքային լուսավորություն ծրագրեր և դրանց առնչվող ֆինանսական մեխանիզմներ) իրականացման համար աշխատող թիմը կազմված կլինի էներգաարդյունավետության ֆինանսավորման, բիզնեսի ներդրումային ռազմավարության և ծրագրերի ֆինանսավորման ոլորտներում փորձառու մասնագետներից:

Բաղադրիչ 4-ի (լուսավորություն ազգային քաղաքականություններ, նորմեր և ստանդարտներ) իրականացման համար աշխատող թիմը կազմված կլինի քաղաքականության, շինարարական նորմերի, արտադրանքի ստանդարտների և համապատասխանության մեխանիզմների ոլորտներում հմուտ մասնագետներից և խորհրդատուներից:

Գծանկար 1. Ծրագրի իրականացման կառուցվածքը



VI. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ և ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ծրագրի մոնիտորինգն իրականացվելու է մոնիտորինգի և գնահատման հետևյալ միջոցառումների միջոցով, որոնց բյուջեն ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

Ծրագրի մեկնարկը.

Ծրագրի մեկնարկից հետո առաջին 2 ամիսների ընթացքում ծրագիրը Մեկնարկային աշխատաժողով է գումարելու, որին մասնակցելու են ծրագրի կազմակերպման կառուցվածքում նշանակված դերակատարները, ՄԱԶԾ գրասենյակը և, անհրաժեշտության/նպատակահարմարության դեպքում՝ տեխնիկական քաղաքականության և ծրագրերի տարածաշրջանային խորհրդատուները, ինչպես նաև այլ շահառուներ: Մեկնարկային աշխատաժողովը կարևոր է ծրագրի արդյունքների սեփականատիրության զգացմունքի առաջացման և առաջին տարվա տարեկան աշխատանքային պլանը կազմելու համար:

Մեկնարկային աշխատաժողովը պետք է նվիրված լինի մի շարք առանցքային հարցերին, որոնց թվում են.

- ա) Աջակցել բոլոր գործընկերներին լիովին հասկանալ ծրագիրը և դառնալ դրա սեփականատերերը: Մանրամասնել դերերը, աջակցել ծրագրի թիմի նկատմամբ ՄԱԶԾ Հայաստանի գրասենյակի և ՄԱԶԾ Բրատիսլավայի տարածաշրջանային կենտրոնի աշխատակազմի ծառայությունների և լրացուցիչ պարտականությունների կատարմանը: Քննարկել ծրագրի որոշումներ կայացնելու կառուցվածքում դերերը, գործառույթները և պարտականությունները, այդ թվում՝ հաշվետվությունների և հաղորդակցման ուղիները և տարածայնությունների լուծման մեխանիզմները: Անհրաժեշտության դեպքում ծրագրի աշխատակազմի տեխնիկական առաջադրանքը կրկին կքննարկվի:
- բ) Ծրագրի արդյունքների շրջանակների և, անհրաժեշտության դեպքում, համապատասխան ԳԷՖ հետևելու մեխանիզմի (գործիքի) հիման վրա, վերջնական տեսքի բերել առաջին տարեկան աշխատանքային պլանը: Դիտարկել և համաձայնեցնել ցուցանիշները, նպատակները և դրանց ստուգման միջոցներ, և վերստուգել ենթադրություններն ու ռիսկերը:
- գ) Մանրամասն ակնարկ ներկայացնել հաշվետվությունների, մոնիտորինգի և գնահատման պահանջների վերաբերյալ: Մոնիտորինգի և գնահատման աշխատանքային պլանը և բյուջեն պետք է համաձայնեցվի և դրանց ժամանակացույցը կազմվի:
- դ) Քննարկել ֆինանսական հաշվետվությունների կարգը և պարտականությունները, և տարեկան աուդիտի պլանը:
- ե) Պլանավորել Ծրագրի խորհրդի նիստերը և կազմել դրանց ժամանակացույցը: Ծրագրի կազմակերպական կառույցների բոլոր դերերն ու պարտականությունները պետք է հստակեցվեն և ժողովները պլանավորվեն: Ծրագրի խորհրդի առաջին նիստը պետք է գումարվի Մեկնարկային աշխատաժողովից հետո ընկած առաջին 12 ամիսների ընթացքում:

Մեկնարկային աշխատաժողովի գեկույցը առանցքային տեղեկատու փաստաթուղթն է, և այն պետք է կազմվի և բաժանվի մասնակիցներին՝ ժողովի ընթացքում որոշված և ընդունված զանազան պայմանավորվածությունների և պլանների պաշտոնական ձևակերպման նպատակով:

Եռամսյակը մեկ անգամ.

- Կատարման ընթացքը վերահսկվելու է ՄԱԶԾ «Արդյունահեն կառավարման հզորացված հարթակ» առցանց միջավայրում,
- Ելնելով ներկայացված նախնական ռիսկի վերլուծությունից, ռիսկի կառուցվածքը կանոնավոր կերպով թարմացվելու է ATLAS համակարգում: Ռիսկը դառնում է

ճգնաժամային, երբ դրա ազդեցությունն ու հավանականությունը բարձր է: Նշենք, որ ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագրերի առումով, ֆինանսական գործիքներին առնչվող բոլոր ֆինանսական ռիսկերը, ինչպիսին են վերականգնվող հիմնադրամները և միկրոֆինանսական սխեմաները, կամ ԷՕՄԸ-ների կապիտալիզացիան, ավտոմատ կերպով դասակարգվում է որպես ճգնաժամային՝ ելնելով դրենց նորարարական բնույթից (նախորդ փորձի բացակայությամբ պայմանավորված մեծ ազդեցությունը ու անորոշությունը արդարացնում է դրանց՝ որպես ճգնաժամային, դասակարգումը):

- Atlas համակարգում արձանագրված տեղեկությունների հիման վրա՝ Ծրագրի աշխատանքային հաշվետվությունը (ՇԱՀ) կարելի է կազմել ելնելով տվյալ պահին առկա արդյունքներից:
- Atlas համակարգի այլ կառուցվածքները կարող են կիրառվել խնդիրները կառավարելու, քաղած դասերի և այլն հարցերում: Այս ֆունկցիաների կիրառումը ՄԱԶԾ-ի այսպես կոչված «Executive Balanced Scorecard»-ում հիմնական ցուցանիշն է:

Յուրաքանչյուր տարի:

- Ծրագրի տարեկան հաշվետվություն / Ծրագրի իրականացման հաշվետվություն (ՕՏՀ/ՕԻՀ): Այս առանցքային հաշվետվությունը պատրաստվում է ծրագրի մեկնարկից ի վեր և, մասնավորապես՝ նախորդ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում (հունիսի 30-ից մինչև հուլիսի 1-ը) կատարված աշխատանքները վերահսկելու համար: ՕՏՀ/ՕԻՀ համապատասխանում են և ՄԱԶԾ-ի և ԳԷՖ-ի հաշվետվությունների ներկայացման պահանջներին:

ՕՏՀ/ՕԻՀ-ը բաղկացած է, սակայն սահմանափակված չէ, հետևյալի մասին հաշվետվություններից.

- Ծրագրի նպատակների իրականացմանը և արդյունքներին ուղղված աշխատանքներ՝ յուրաքանչյուրն իր ցուցանիշներով, էլակետային տվյալներով և ծրագրի ավարտական նպատակներով (կուտակային)
- Ըստ յուրաքանչյուր Ծրագրի Արդյունքի՝ ծրագրից ստացված արդյունքները (տարեկան)
- Քաղած դասերը / առաջադեմ փորձը
- Տարեկան աշխատանքային պլանը այլ ծախսային հաշվետվություններ
- Ռիսկերը և հարմարվողական կառավարումը
- ATLAS համակարգում աշխատանքների եռամսյակային հաշվետվություններ
- Պորտֆելի մակարդակով ցուցանիշներն (օր.՝ ԳԷՖ-ի ուշադրության ենթակա թեմաներին հետևելու գործիքներ) օգտագործվում են ուշադրության ենթակա թեմաներից շատերի համար՝ նաև տարեկան կտրվածքով:

Պարբերական մոնիտորինգ՝ տեղերում ստուգայցերի միջոցով.

Ըստ ծրագրի Մեկնարկային զեկույցի / Տարեկան աշխատանքային պլանի սահմանված ժամանակացույցի, ՄԱԶԾ Հայաստանյան գրասենյակը և ՄԱԶԾ Բրատիսլավայի տարածաշրջանային կենտրոնը այցեր են կատարելու դեպի ծրագրի օբյեկտները ծրագրի կատարման առաջընթացին օժանդակելու համար: Ծրագրի խորհրդի այլ անդամները, նույնպես, կարող են մասնակցել այդ այցերին: Տեղերում ստուգայցերի զեկույցները նախապատրաստվում են Հայաստանյան գրասենյակի և ՄԱԶԾ Բրատիսլավայի տարածաշրջանային կենտրոնի կողմից և ուղարկվում են Ծրագրի թիմի և Ծրագրի խորհրդի անդամներին ոչ ուշ, քան այցից հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Ծրագրի իրականացման միջնաժամկետին.

Ծրագիրն անկախ Միջնաժամկետ գնահատման է ենթարկվելու ծրագրի իրականացման միջնաժամկետին (նախնական՝ 2015թ. նոյեմբեր): Միջնաժամկետ գնահատման միջոցով որոշվելու է Արդյունքներին հասնելու ուղղությամբ կատարված աշխատանքների առաջընթացը և, անհրաժեշտության դեպքում, ընթացքի ուղղության փոփոխությունը: Այն ուշադրություն է դարձնելու ծրագրի կատարման արդյունավետության, արտադրողականության և ժամկետների պահպանման վրա, բացահայտելու է քննարկում և որոշում պահանջող խնդիրները, և ներկայացնելու է ծրագրի նախագծից, իրականացումից և կառավարումից քաղած նախնական դասերը: Այս ստուգման արդյունքները առաջարկության տեսքով կներկայացվեն ծրագրի ժամկետի երկրորդ հատվածի իրականացման բարելավման համար: Միջնաժամկետ գնահատման կազմակերպումը, դրա տեխնիկական առաջադրանքը և ժամանակացույցը կորոշվի կողմերի միջև ծրագրային փաստաթղթի շուրջ խորհրդակցությունից հետո: Միջնաժամկետ գնահատման համար տեխնիկական առաջադրանքը նախապատրաստվելու է ՄԱԶԾ Հայաստանի գրասենյակի կողմից՝ ըստ Տարածաշրջանային համակարգող գրասենյակի և ՄԱԶԾ-ԳԷՖ կողմից տրվող ուղեցույցի: Ծրագրի կառավարման անդրադարձը և գնահատման արդյունքները ներբեռնվելու են ՄԱԶԾ կորպորատիվ համակարգում, մասնավորապես՝ ՄԱԶԾ Գնահատման գրասենյակի Գնահատման ռեսուրսների կենտրոնում (ERC):

Միջնաժամկետ գնահատման ցիկլի ընթացքում ծրագրի համապատասխանությունն ու առաջընթացն ըստ ԳԷՖ-ի թեմատիկ բնագավառի հետևվելու է հատուկ գործիքներով, լրացնելով սահմանված հարցաշարեր (Tracking Tool):

Ծրագրի ավարտը

Ծրագիրն անկախ Վերջնական գնահատման է ենթարկվելու Ծրագրի խորհրդի ավարտական ժողովից երեք ամիս առաջ և, որն իրականացվելու է ՄԱԶԾ-ի և ԳԷՖ-ի ուղեցույցին համապատասխան: Վերջնական գնահատումը ուշադրություն է դարձնելու ի սկզբանե պլանավորված (և միջնաժամկետ գնահատումից հետո ուղղված, եթե նման ուղղումներ եղել են) արդյունքների կատարման վրա: Վերջնական գնահատումը կանդրադառնա արդյունքների ազդեցության և կայունության, այդ թվում՝ կարողությունների զարգացմանը նպաստելու և գլոբալ բնապահպանական օգուտների/նպատակներ իրականացման վրա: Այս գնահատման տեխնիկական առաջադրանքը պատրաստվելու է ՄԱԶԾ Հայաստանի գրասենյակի կողմից՝ ըստ Տարածաշրջանային համակարգող գրասենյակի և ՄԱԶԾ-ԳԷՖ կողմից տրվող ուղեցույցի:

Ավարտական գնահատմամբ նաև հետագա միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ են արվելու և կառավարման արդրադարձ է ներբեռնվելու ԾԻԿՀ-ում և ՄԱԶԾ Գնահատման գրասենյակի Գնահատման ռեսուրսների կենտրոնում (ERC):

Ավարտական գնահատման ընթացքում ծրագրի համապատասխանությունն ու առաջընթացն ըստ ԳԷՖ-ի թեմատիկ բնագավառի հետևվելու է հատուկ գործիքներով, լրացնելով սահմանված հարցաշարեր (Tracking Tool):

Վերջին երեք ամիսների ընթացքում Ծրագրի թիմը Ծրագրի Վերջնական հաշվետվություն է նախապատրաստելու: Այս համապարփակ հաշվետվությունը ամփոփելու է ձեռքբերված արդյունքները (նպատակները, ստացված արդյունքները, տված օգուտները), քաղած դասերը, ծառայած խնդիրները և այն ոլորտները, որտեղ սպասված արդյունքները կարող էին իրականացված չլինել: Այն նաև հանձնարարականներ կտա այն հետագա քայլերի համար, որոնք կարող են անհրաժեշտ լինել ծրագրի արդյունքների կայունության ապահովման և կրկնօրինակման համար:

Ուսուցում և գիտելիքների փոխանակում.

Առկա տեղեկությունների փոխանակման ցանցերի և ֆորումների միջոցով ծրագրից ստացված արդյունքները տարածվելու են ծրագրի միջամտության գոտու ներսում և դրանից դուրս:

Ծրագիրը, համապատասխանության և անհրաժեշտության դեպքում, գտնելու և մասնակցելու է գիտական, քաղաքական և/կամ այլ ցանցերին, որոնք կարող են քաղած դասերի միջոցով օգուտ բերել ծրագրի իրականացմանը: Ծրագիրը բացահայտելու, վերլուծելու և փոխանակելու է քաղած դասերի այն արդյունքները, որոնք կարող են օգտակար լինել ապագա նմանօրինակ ծրագրերի նախագծման և իրականացման համար:

Ի վերջո, երկկողմանի տեղեկատվական մի հոսք կհաստատվի այս ծրագրի և նմանօրինակ նպատակներով այլ ծրագրերի միջև:

Հաղորդակցման և տեսանելիության պահանջներ.

Անհրաժեշտ է պահպանել ՄԱԶԾ-ի Բրենդինգային ուղեցույցների համապատասխանության պահանջները: Դրանք կարելի է գտնել մուտք գործելով՝ <http://intra.undp.org/coa/branding.shtml>, և ՄԱԶԾ-ի լոգոտիպի օգտագործման հատուկ ուղեցույցների կայքը. <http://intra.undp.org/branding/useOfLogo.html>

Բացի դա, այս ուղեցույցները նկարագրում են, թե երբ և որ դեպքում է կարելի օգտագործել ՄԱԶԾ-ի լոգոտիպը, ինչպես նաև, թե որ դեպքում է կարելի օգտագործել ՄԱԶԾ ծրագրերի դոմորների լոգոտիպը: Լոգոտիպի օգտագործման անհրաժեշտության վերաբերյալ կասկածներից խուսափելու համար ՄԱԶԾ-ի լոգոտիպի կողքին պետք է պատկերել ԳԷՖ-ի լոգոտիպը: ԳԷՖ-ի լոգոտիպը կարելի է գտնել մուտք գործելով http://www.thegef.org/gef/GEF_logo

Անհրաժեշտ է պահպանել նաև ԳԷՖ-ի Հաղորդակցման և տեսանելիության ուղեցույցների համապատասխանության («ԳԷՖ Ուղեցույցներ») պահանջները. [http://www.thegef.org/gef/sites/thegef.org/files/documents/C.40.08 Branding the GEF%20final 0.pdf](http://www.thegef.org/gef/sites/thegef.org/files/documents/C.40.08_Branding_the_GEF%20final_0.pdf)

Բացի դա, կարելի է գտնել նաև, թե երբ և որ դեպքերում է անհրաժեշտ օգտագործել ԳԷՖ-ի լոգոտիպը՝ ծրագրի հրապարակումներում, շարժակազմի վրա, ապրանքների և ծրագրի այլ սարքավորումների վրա, մամլո հաղորդագրությունների վրա, մամլո ասուլիսներում, ՋԼՄ-ների այցերի ժամանակ, պետական պաշտոնյաների այցերի ժամանակ, արտադրանքի և այլ քարոզչական նյութերի վրա:

Այն քեպերում, երբ այլ կազմակերպություններ և ծրագրի գործընկերներ համաֆինանսավորման միջոցով օժանդակում են ծրագրին, նույն ձևը կիրառվում է նաև նրանց բրենդինգային քաղաքականության և պահանջների նկատմամբ:

Մոնիտորինգի և գնահատման միջոցառման ձևը	Պատասխանատու կողմերը	Բյուջեն ԱՄՆ դոլար, բացի Ծրագրի թիմի աշխատակազմի ժամանակից	Ժամանակացույց
Մեկնարկային աշխատաժողով	<ul style="list-style-type: none"> ▪ Ծրագրի կառավարիչ միջազգային փորձագետի աջակցությամբ ▪ ՄԱԶԾ Հայաստան ▪ ՄԱԶԾ ԳԷՖ տարածաշրջանային տեխնիկական խորհրդատու 	5,000	Ծրագրի մեկնարկի առաջին երկու կամ երեք ամիսների ընթացքում
Ծրագրի նպատակային ցուցանիշների ստուգման միջոցների չափում. ՋԳ արտանետման մոնիտորինգ (բազային գիծ և արդյունքներ) ըստ ԳԷՖ-ԳՏԽՄ մեթոդաբանության	<ul style="list-style-type: none"> ▪ ՄԱԶԾ ԳԷՖ տարածաշրջանային տեխնիկական խորհրդատու ▪ Ծրագրի կառավարիչ ▪ ՋԳ մոնիտորինգի գծով փորձագետ 	10,000	Ծրագրի սկզբին, միջնաժամկետին և ավարտին
Ծրագրի առաջընթացի և կատարողականի ստուգման միջոցների չափում (չափվում է տարեկան կտրվածքով)	<ul style="list-style-type: none"> ▪ Հսկվում է ՄԱԶԾ ԳԷՖ տարածաշրջանային տեխնիկական խորհրդատուի և Ծրագրի կառավարչի կողմից ▪ Ծրագրի աշխատակազմ 	Չկա	Տարեկան կտրվածքով՝ մինչև ԾՏՀ/ԾԻՀ
Ծրագրի տարեկան հաշվետվությունը (ԾՏՀ) և ծրագրի իրագործման հաշվետվությունը (ԾԻՀ)	<ul style="list-style-type: none"> ▪ Ծրագրի կառավարիչ և աշխատակազմ ▪ ՄԱԶԾ Հայաստան ▪ ՄԱԶԾ ԳԷՖ տարածաշրջանային տեխնիկական խորհրդատու 	Չկա	Տարեկան կտրվածքով
Ծրագրի խորհրդի նիստեր	<ul style="list-style-type: none"> ▪ Ծրագրի կառավարիչ ▪ ՄԱԶԾ Հայաստան 	Չկա	Մեկնարկային աշխատաժողովից հետո և, հետևաբար, տարեկան առնվազն մեկ անգամ
Իրավիճակի պարբերական հաշվետվություններ	<ul style="list-style-type: none"> ▪ Ծրագրի կառավարիչ և աշխատակազմ 	Չկա	Եռամսյակային կտրվածքով
Միջանկյալ արտաքին գնահատում	<ul style="list-style-type: none"> ▪ Ծրագրի կառավարիչ ▪ ՄԱԶԾ Հայաստան ▪ ՄԱԶԾ ԳԷՖ տարածաշրջանային տեխնիկական խորհրդատու ▪ Արտաքին խորհրդատուներ (գնահատման թիմ) 	20,000	Ծրագրի իրագործման միջնաժամկետում

Մոնիտորինգի և գնահատման միջոցառման ձևը	Պատասխանատու կողմերը	Բյուջեն ԱՄՆ դոլար, բացի Ծրագրի թիմի աշխատակազմի ժամանակից	Ժամանակցույց
Վերջնական արտաքին գնահատում	<ul style="list-style-type: none"> ▪ Ծրագրի կառավարիչ ▪ ՄԱԶԾ Հայաստան ▪ ՄԱԶԾ ԳԷՖ տարածաշրջանային տեխնիկական խորհրդատու 	20,000	Ծրագրի իրականացման ավարտից առնվազն երեք ամիս առաջ
«Քաղած դասեր» վերջնական հաշվետվություն	<ul style="list-style-type: none"> ▪ Ծրագրի կառավարիչ ▪ ՄԱԶԾ Հայաստան ▪ Ազգային փորձագետներ 	Չկա	Ծրագրի իրականացման ավարտից առնվազն մեկ ամիս առաջ
Առողիտ	<ul style="list-style-type: none"> ▪ ՄԱԶԾ Հայաստան ▪ Ծրագրի կառավարիչ և աշխատակազմ 	6,000 (2,000՝ միջին տարեկան, բացառությամբ առաջին տարվա)	Տարեկան կտրվածքով
Այցեր տեղերում (ՄԱԶԾ անձնակազմի ճամփորդություն ծախսերը ծածկվում են ԳԷՖ-ի իրականացնող գրասենյակին տրամադրված մասհանումից)	<ul style="list-style-type: none"> ▪ ՄԱԶԾ Հայաստան ▪ ՄԱԶԾ-ԳԷՖ Տարածաշրջանային համակարգող գրասենյակ (ըստ պատշաճի) ▪ Կառավարության ներկայացուցիչներ 	30,000	Տարեկան կտրվածքով
ԸՆԴԱՄԵՆԸ ինդիկատիվ ԾԱԽՍԵՐ Առանց ծրագրի թիմի անձնակազմի ժամանակի և ՄԱԶԾ անձնակազմի և ճամփորդություն ծախսերի		61,000 ԱՄՆ դոլար	

VII. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ծրագրի այս Փաստաթուղթն այն գործիքն է, որը, որպես այդպիսին, սահմանված է Հայաստանի կառավարության և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶՕ) միջև Հիմնական աջակցություն ստանդարտ համաձայնագրի (SBAA) 1-ին Հոդվածում, որը կողմերը ստորագրել են 1995թ. մարտի 8-ին: Ընդունող երկրում իրականացնող կազմակերպություն ստեղծվելու, ըստ Հիմնական աջակցություն ստանդարտ համաձայնագրի, պետք է հասկանալ՝ կառավարության համագործակցող կազմակերպություն, ինչպես սահմանված է այդ Համաձայնագրում:

Հիմնական աջակցություն ստանդարտ համաձայնագրի Հոդված III-ի համաձայն, Իրագործող մարմնի և իր անձնակազմի և գույքի, ինչպես նաև վերջինիս տնօրինության տակ դրված ՄԱԶՕ-ի գույքի ապահովության ու անվտանգության պատասխանատվությունը դրվում է Կատարող մարմնի վրա:

Կատարող մարմինը պետք է.

- (i) կազմի մի համապատասխան անվտանգության պլան և իրականացնի այդ անվտանգության պլանը՝ հաշվի առնելով այն երկրի անվտանգության իրավիճակը, որտեղ իրականացվում է ծրագիրը,
- (ii) կրի Կատարող մարմնի անվտանգությանն առնչվող և անվտանգության պլանի իրականացման բոլոր ռիսկերն ու պարտավորությունները.

ՄԱԶՕ-ն իրավունք է վերապահում ստուգելու վերոհիշյալ պլանի առկայությունը և, անհրաժեշտության դեպքում, այդ պլանի մեջ փոփոխություններ մտցնելու առաջարկություններ անել: Սույնով նախատեսվող անվտանգության պլանի պատշաճ պահպանման և իրականացման ձախողումը այս համաձայնագրի խախատում է համարվում:

ՄԱԶՕ մշտական ներկայացուցիչը լիազորված է սույն Ծրագրային փաստաթղթում գրավոր կարգով կատարել հետևյալ փոփոխություններ, այն դեպքում, եթե նա վավերացրել է ԳԷՖ գրասենյակի կողմից ստորագրված համաձայնագիրը և հավաստիացված է, որ սույն Ծրագրային փաստաթղթի մյուս ստորագրող կողմերը չեն առարկում առաջարկվող փոփոխություններին.

- ա) վերանայել Ծրագրային փաստաթղթի ցանկացած հավելվածը և դրանում ավելացումներ կատարել,
- բ) փոփոխություններ, որոնք չեն հանգեցնում ծրագրի ուղղակի նպատակների, արդյունքների կամ միջոցառումների փոփոխությանը, այլ առաջանում են արդեն համաձայնեցված արդյունքների վերադասավորման կամ սղաճի հետևանքով ծախսերի աճի պատճառով,
- գ) պարտադիր տարեկան փոփոխություններ, որոնք՝ սղաճի պատճառով կամ հաշվի առնելով կազմակերպության ծախսերի ճկունությունը, վերափոխում են ծրագրի համաձայնեցված գնումների գրաֆիկը կամ ավելացնում են փորձագետների կամ այլ ծախսեր՝ և
- դ) լրացուցիչ հավելվածների և ներդիրների ավելացում միայն այն ձևով, ինչպես ներկայացված է սույն Ծրագրային փաստաթղթում:

VIII. ԱՌԻՖԻՏԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Առողիտն իրականացվում է ըստ ՄԱԶԾ Ֆինանսական ընթացակարգերի և կանոնների և ՄԱԶԾ ծրագրերի համար կիրառելի առողիտի քաղաքականությանը համապատասխան:

Հավելված Զ. ՄԱԶԾ և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև ստանդարտ համաձայնագիր՝ Աջակցության ծառայություններ մատուցելու մասին. «Կանաչ քաղաքային լուսավորություն» ծրագիր, ՆՀ 00083013

Գերազանցություն,

1. Հղում է կատարվում Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնյաների (այսուհետ՝ «Կառավարություն») և ՄԱԶԾ պաշտոնյաների միջև հանրապետության կողմից կառավարվող ծրագրերին և նախագծերին ՄԱԶԾ Հայաստանի գրասենյակի կողմից Աջակցության ծառայություններ մատուցելու վերաբերյալ իրականացված խորհրդակցություններին: ՄԱԶԾ-ն ու կառավարությունը սույնով համաձայնում են, որ ՄԱԶԾ-ի գրասենյակը կառավարության ինդրանքով կարող է նման աջակցության ծառայություններ մատուցել իր պետական մարմնի միջոցով, որը նախատեսված է համապատասխան նախագծի աջակցության փաստաթղթում կամ ծրագրային փաստաթղթում՝ ինչպես նկարագրված է ստորև:

2. ՄԱԶԾ Հայաստանի գրասենյակը կարող է աջակցության ծառայություններ մատուցել պահանջվող հաշվետվություններին և ուղղակի վճարումներին օժանդակելու գործում: Նման աջակցության ծառայություններ մատուցելիս ՄԱԶԾ Հայաստանի գրասենյակը պետք է ապահովի կառավարության լիազորված մարմնի այնպիսի հզորացումը, որը վերջինիս հնարավորություն կընձեռի ուղղակիորեն իրականացնել նախատեսված միջոցառումները: Այդ աջակցության ծառայությունների մատուցման համար ՄԱԶԾ Հայաստանի գրասենյակի կողմից կատարած ծախսերը վճարվելու են գրասենյակի վարչական բյուջեից:

3. Լիազորված մարմնի խնդրանքով ՄԱԶԾ Հայաստանի գրասենյակը ծրագրի/նախագծի միջոցառումների համար կարող է մատուցել հետևյալ աջակցության ծառայությունները.

- (ա) նախագծի և ծրագրի համար անձնակազմ ընտրել և/կամ հավաքագրել,
- (բ) վերապատրաստման միջոցառումներ կազմել և աջակցել դրանց իրականացմանը,
- (գ) ապրանքներ և ծառայություններ գնել:

4. ՄԱԶԾ Հայաստանի գրասենյակի կողմից ապրանքների և ծառայությունների գնումը և ծրագրի ու նախագծի անձնակազմի հավաքագրումը իրականացվում է ՄԱԶԾ կանոնակարգերին, կանոններին, քաղաքականությանը և ընթացակարգերին համապատասխան: Երրորդ կետում նշված աջակցության ծառայությունները մանրամասնորեն նկարագրվելու են նախագծի աջակցության փաստաթղթի կամ ծրագրային փաստաթղթի հավելվածում՝ ըստ այստեղ կցված Հավելվածի ձևաչափի: Հայաստանի գրասենյակի կողմից մատուցվելիք աջակցության ծառայությունների պահանջները ծրագրի կամ նախագծի իրականացման ժամանակաշրջանում փոխվելու դեպքում նախագծի աջակցության փաստաթղթի կամ ծրագրային փաստաթղթի հավելվածը ենքակա է վերանայման միայն ՄԱԶԾ մշտական ներկայացուցչի և լիազորված մարմնի միջև փոխադարձ համաձայնությամբ:

5. Այս աջակցության ծառայությունների մատուցման դեպքում կիրառվում են Հայաստանի Հանրապետության կառավարության և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) միջև 1995 թ. մարտի 8-ին ստորագրված Հիմնական աջակցության ստանդարտ համաձայնագրի (ՀԱՍՀ) համապատասխան դրույթները, այդ թվում՝ պատասխանատվության և արտոնությունների և անձեռնմխելիությունների մասին դրույթները: Կառավարությունն ընդհանուր պատասխանատվություն է կրում իր լիազորված մարմնի միջոցով հանրապետության կողմից կառավարվող ծրագրի կամ նախագծի համար: Սույնով ներկայացված աջակցության ծառայությունների

մատուցման համար ՄԱԶԾ Հայաստանի գրասենյակի պատասխանատվությունը սահմանափակվում է միայն այն մատուցվելիք աջակցության ծառայություններով, որոնք մանրամասն ներկայացված են ծրագրային փաստաթղթում:

6. Սույն համաձայնագրի շրջանակներում ՄԱԶԾ Հայաստանի գրասենյակի կողմից աջակցության ծառայությունների մատուցման ընթացքում, կամ դրանից առաջացած պահանջները կամ վեճերը լուծվում են ըստ ՀԱՍՀ-ի համապատասխան դրույթների:

7. Սույն փաստաթղթի 3-րդ կետով նախատեսված աջակցության ծառայությունների մատուցման համար ՄԱԶԾ Հայաստանի գրասենյակի կողմից ծախսերի հատուցման ձևն ու մեթոդները սահմանվում են սույն ծրագրային փաստաթղթի հավելվածում:

8. ՄԱԶԾ Հայաստանի գրասենյակը աջակցության ծառայությունների մատուցման վերաբերյալ աշխատանքային հաշվետվություն է ներկայացնելու և, անհրաժեշտության դեպքում, զեկուցելու է այդ աջակցության ծառայությունների մատուցման ծախսերի փոխհատուցման մասին:

9. Սույն պայմանավորվածության մեջ ցանկացած փոփոխություն կատարվում է միայն կողմերի միջև փոխադարձ գրավոր համաձայնության պայմաններում:

Կառավարության անունից

ՄԱԶԾ – ի անունից

Արամ Հարությունյան
Հայաստանի Հանրապետության
բնապահպանության նախարար

Բրեդլի Բուսետո
ՄԱԿ-ի մշտական համակարգող
ՄԱԶԾ-ի մշտական ներկայացուցիչ

Ամիս/ամսաթիվ :.....

Ամիս/ամսաթիվ :.....

**ՄԱԶԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

1. Հղում է կատարվում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի՝ Բնապահպանության նախարարության և ՄԱԶԾ պաշտոնյաների միջև հանրապետության կողմից կառավարվող “Կանաչ քաղաքային լուսավորություն” ծրագրին / ՆՀ 00083013/ ՄԱԶԾ Հայաստանի գրասենյակի կողմից աջակցության ծառայություններ մատուցելու վերաբերյալ խորհրդակցություններին:
2. Ըստ ստորագրված համաձայնագրի դրույթների և ծրագրային փաստաթղթի ՄԱԶԾ Հայաստանի գրասենյակը ստորև նշված Ծրագրի համար մատուցելու է հետևյալ աջակցության ծառայությունները:
3. Մատուցվելիք աջակցության ծառայությունները.

Աջակցության ծառայություն	Աջակցության ծառայությունների մատուցման ժամանակացույցը	Այդ աջակցության ծառայությունների համար ՄԱԶԾ – ի ծախսերը (անհրաժեշտության դեպքում)	ՄԱԶԾ փոխհատուցման գումարները և մեթոդները (անհրաժեշտության դեպքում)
Վճարման գործընթացը	Անհրաժեշտության դեպքում կատարվում է իրականացման ամբողջ ընթացքում	Ըստ համընդհանուր գնացուցակի յուրաքանչյուրը՝ 23,59 ԱՄՆ դոլար	Ծառայությունների մատուցումից հետո ՄԱԶԾ –ը գումարը ուղղակիորեն գանձելու է ծրագրից՝ եռամսյակային կտրվածքով
Մատակարարը՝ ըստ ԱՏԼԱՍ համակարգի	Անհրաժեշտության դեպքում կատարվում է իրականացման ամբողջ ընթացքում	Ըստ համընդհանուր գնացուցակի, յուրաքանչյուրը՝ 12,17 ԱՄՆ դոլար	Ինչպես նախարդում
Ծրագրի անձնակազմի ընտրության և/կամ հավաքագրման գործընթացը * Ծրագրի առաջադրանքի ղեկավար * Ծրագրի օգնական	2013թ. հոկտեմբեր-նոյեմբեր 2013թ. դեկտեմբեր	Ըստ համընդհանուր գնացուցակի, յուրաքանչյուրը 371,37 ԱՄՆ դոլար	Ինչպես նախարդում
Անձնակազմի վարման և հատկացումների վարչարարության և կառավարման համար (մեկ անգամ՝ յուրաքանչյուր աշխատողի հանար, ներառյալ՝ բժշկական ապահովագրության, հաստիքացուցակի կազման և առանձնացման գործընթացը)	Անհրաժեշտության դեպքում կատարվում է իրականացման ամբողջ ընթացքում	Ըստ համընդհանուր գնացուցակի, յուրաքանչյուրը 128,77 ԱՄՆ Դոլար`	Ինչպես նախարդում

Աջակցության ծառայություն	Աջակցության ծառայությունների մատուցման ժամանակացույցը	Այդ աջակցության ծառայությունների համար ՄԱԶՑ – ի ծախսերը (անհրաժեշտության դեպքում)	ՄԱԶՑ փոխհատուցման գումարները և մեթոդները (անհրաժեշտության դեպքում)
Անձնակազմի ընթացիկ կառավարման ծառայություններ. Հաստիքացուցակի և բանկային հաշիվների վարում և կառավարում : (յուրաքանչյուրի համար՝ ամեն օրացուցային տարի)	Անհրաժեշտության դեպքում կատարվում է իրականացման ամբողջ ընթացքում	Ըստ համընդհանուր գնացուցակի, յուրաքանչյուրը ԱՄՆ դոլար 288,75	Ինչպես նախորդում
Խորհրդատուի հավաքագրում	Անհրաժեշտության դեպքում կատարվում է իրականացման ամբողջ ընթացքում	Ըստ համընդհանուր գնացուցակի, յուրաքանչյուրը ԱՄՆ սոլար 145,21	Ինչպես նախորդում
Ապրանքների և ծառայությունների գնում տեղական CAP –ի ներգրավմամբ	2013 թ. հոկտեմբեր - դեկտեմբեր	Ըստ համընդհանուր գնացուցակի, ԱՄՆ Դոլար 333,79 գնման յուրաքանչյուր գործընթացի համար	Ինչպես նախորդում
Տեղական CAP –ին չառնչվող ապրանքների և ծառայությունների գնում	2013 թ. հոկտեմբեր - դեկտեմբեր	Ըստ համընդհանուր գնացուցակի, ԱՄՆ դոլար 133,07 գնման յուրաքանչյուր գործընթացի համար	Ինչպես նախորդում
Անցաթղթի/վկայականի տրամադրում (UN LP, UN ID, etc.)	Անհրաժեշտության դեպքում կատարվում է իրականացման ամբողջ ընթացքում	Ըստ համընդհանուր գնացուցակի, յուրաքանչյուրը ` 23,86 ԱՄՆ դոլար	Ինչպես նախորդում
F10 հաշվարկներ (գործուղման)	Անհրաժեշտության դեպքում կատարվում է իրականացման ամբողջ ընթացքում	Ըստ համընդհանուր գնացուցակի, յուրաքանչյուրը 19,94 ԱՄՆ Դոլար	Ինչպես նախորդում
Մուտքի արտոնագրի հայտ	Անհրաժեշտության դեպքում կատարվում է իրականացման ամբողջ ընթացքում	Յուրաքանչյուրը՝ 15,39 ԱՄՆ Դոլար	Ինչպես նախորդում
Հյուրանոցի ամրագրում	Անհրաժեշտության դեպքում կատարվում է իրականացման ամբողջ ընթացքում	Յուրաքանչյուրը՝ 8,44 ԱՄՆ Դոլար	Ինչպես նախորդում
Ճամփորդության տուների ձևակերպում	Անհրաժեշտության դեպքում կատարվում է իրականացման ամբողջ ընթացքում	Յուրաքանչյուրը՝ 18,77 ԱՄՆ Դոլար	Ինչպես նախորդում

ՄՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԷՋ

Երկիրը՝ Հայաստան

ՄԱԿ ԶԱԾ-ի Արդյունք(ներ)ը/Չափորոշիչ(ներ)ը. Շրջակա միջավայրի և աղետների ռիսկերի նվազեցումը ինտեգրված է հանրապետական և տեղական զարգացման ծրագրերում

ՀԾՊԳ արդյունք(ներ)ը/չափորոշիչ(ներ)ը. Բնապահպանական արդյունավետության համաթիվ

ՀԾՊԳ միջանկյալ արդյունք(ներ)ը/չափորոշիչ(ներ)ը.

1. Էներգետիկ արդյունավետությունը խրախուսող՝ ընդունված օրենքների և օրենսդրական ակտերի թիվը,
2. Էներգետիկ արդյունավետությունը խրախուսող՝ մշակված և իրականացված նախաձեռնությունների թիվը,
3. Ռեյթինգավորման և պիտակավորման ներդրված պրակտիկ կիրառումների թիվը:

Իրագործող մարմինը/Իրականացնող գործընկերը.

ՀՀ բնապահպանության նախարարություն

Իրականացնող մարմինը/Պատասխանատու գործընկերը.

ՀՀ բնապահպանության նախարարություն

<p>Ծրագրի տևողությունը՝ 2010-2015թթ.</p> <p>Հատկացման նույնականացման համարը Atlas համակարգում՝ 00074869</p> <p>Ծրագրի ՆՀ՝ 00087057</p> <p>ՕԻԿՀ PIMS #՝ 4669</p> <p>Սկիզբը՝ 2013թ.</p> <p>Ավարտը՝ 2017թ.</p> <p>Կառավարման կազմակերպումը՝ Ազգային իրագործում</p> <p>Ծրագրերի գնահատման կոմիտեի նիստի ժամկետը՝ 2013թ.</p>	<p>Անհրաժեշտ միջոցները, ընդ. ԱՄՆ դոլար 10,190,000</p> <p>Տրամադրված միջոցները, ընդ. ԱՄՆ դոլար 10,190,000</p> <p>Կանխիկ դրամական միջոցներ.</p> <ul style="list-style-type: none"> ○ ԳԷՖ ԱՄՆ դոլար 1,600,000 ○ ՄԱԶԾ ԱՄՆ դոլար 120,000 ○ ՏԻՄ-եր ԱՄՆ դոլար 7,055,000 ○ Այլ ԱՄՆ դոլար 95,000 <p>Բնեղեն հատկացումներ՝</p> <ul style="list-style-type: none"> ○ ՄԱԶԾ ԱՄՆ դոլար 1,000,000 ○ Կառավարություն ԱՄՆ դոլար 320,000
---	--

Հաստատված է (Կառավարություն).

օր/ամիս/տարի

Համաձայնեցված է (կատարող մարմին / իրականացնող գործընկեր).

օր/ամիս/տարի

Համաձայնեցված է (ՄԱԶԾ).

օր/ամիս/տարի